

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

❖ ՈՐՎ ԵՐ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ

❖ ՈՐՏԵՂԻՑ ԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ԳՐԱՆՇԱՆՆԵՐԸ

❖ ՀԱՅՈՑ ԶՈՐԱ ԱՅԲՈՒԲԵՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ասորեստանի, իսկ հետագայում արեմեյան Իրանի ու Հռոմի դեմ մղած ծանր ու երկարատև պատերազմները խիստ բացասաբար ազդեցին Հայոց մշակույթի վրա: Հայոց ազգային մշակույթը հատկապես ու զգալի բացասական ներգործություն կրեց հելլենիզմի դարաշրջանում:

Իրան հաջորդեց Հայաստանի բռնի քրիստոնեացումը: Հարուստ և հազարամյակների պատմություն ունեցող Հայոց ազգային մշակույթի դաշտը վերջնականապես վերածվեց անապատի: Մասնավորապես իսպառ բնաջնջվեցին մշակույթ ստեղծող և պահպանող հիմնական գործոնները. ազգային գիրն ու գրչությունը, քրմական դասն ու քրմական գիտությունը և ազգային աստվածների պաշտամունքը: Միայն դարեր անց Հայոց ազգային մշակույթը սկսում է կատարել վերածննդի իր առաջին քայլերը: Ճեղքելով ազգային մշակույթի վրա քրիստոնեության փռած «ասֆալտը», հայտնվում են վերածննդի առաջին տեսանելի ծիլերը: Պարզվում է, որ որոշ գիտելիքներ այնուամենայնիվ հաջողվել է պահպանել:

Գիտելիքի պահպանման միայն երկու միջոց կա.

ա. **հիշողություն** – գիտելիքը սերնդից սերունդ է փոխանցվում բանավոր;

բ. **գիր** – գիտելիքը պահպանվում և սերնդից սերունդ է փոխանցվում գրի միջոցով:

Գիտելիքի փոխանցման երկրորդ տարբերակն ընդհատվեց, քանզի Հայոց արքայի թուլությունից և Գրիգոր Պարթևի առաջնորդությամբ Հայաստանը քրիստոնեացնող հույն, ասորի, հրեա քարոզիչները ոչնչացրին գիրն ու գրակիր ամեն ինչը: Ոչնչացվեց նաև քրմական դասի գիրն ու գիտելիքը կրողների մեծ մասը:


Բարեբախտաբար քրմական դասի մի մասն ընդունեց քրիստոնեություն և դարձավ քրիստոնեա հոգևորական: Հետագա դեպքերը ցույց են տալիս, որ հայ քրմերը քրիստոնեությունն ընդունել են առեկտայով: Հավանաբար նրանց այդ քայլին է մղել երկու հանգամանք.

ա. հույսը, որ շուտով կվերականգնվեն հին կրոնն ու բարքերը;

բ. եթե այդ հույսը կարճ ժամանակում չիրականանա, ապա գիտելիքը պահպանելու այլ տարբերակ ունենան:

Փաստ է, որ առաջին կետի առումով նրանց հույսերը չարդարացան: Այդ իսկ պատճառով նրանք ընտրեցին գիտելիքի պահպանման մյուս տարբերակը. սկսեցին ծածուկ կրթել ու պատրաստել այն ժառանգորդներին, ում այսօր փոխանցելն իրենց գիտելիքները: Այդպես ձևավորվեց ազգային հավատքին հաղորդակից նվիրյալների ժառանգորդական կարգը:


Փրկված և առերևույթ քրիստոնեություն ընդունած քրմերի այդ ընդհատակյա գործունեության առաջին արդյունքները սկսում են ցայտուն երևալ 4-5-րդ դարերից: Մինչ այդ քրիստոնեության մեջ խաչելության արգահատելի գործիքը համարվող խաչի պատկերն արագորեն ներմուծվում է քրիստոնեության մեջ, դառնում է նրա գլխավոր նշանակող, սակայն ժամանակ է որպես անընդունելի խորհրդանշան: Մինչ այդ, այն գործածվել էր որպես գաղափարագիր գրանշան, որով գաղափարագրվում էր Հայոց Աստծու «աստված առաջնորդ» իմաստը կրող անունը: Հայտնվում են առաջին խաչքարերը, որոնց վրա խաչից բացի, փորագրվում են նախաքրիստոնեական շրջանի այլ գաղափարագիր նշաններ, որպես թե խաչքարը զարդարող նախշեր: Եկեղեցիների պատերին, քարակոթողների վրա, մանրանկարչության մեջ հայտնվում են քրիստոնեական դավանանքի հետ ոչ մի առնչություն չունեցող կենդանապատկերներ (այծ, ցուլ, առյուծ, օձ, արծիվ), որոնց միջոցով ևս հնում գաղափարագրվում էին կարևոր դիցանուններ:



Նկար 1. ա, բ) Աղթամարի ս. Խաչ եկեղեցի, գ) Գեղարդ, Այրիվանք

Այս պրոցեսը շարունակվում է մինչև IX-XII դարեր, երբ թոնդրակ-

յան շարժման ֆոնի վրա մատյաններում հայտնվում են Նշանագիրք իմաստնոցի (=իմաստների նշանագրեր, գաղափարագրեր) առաջին ցուցակները: Իմա ծայտյալ քրմերի գաղափարական ժառանգները շարունակում էին գործածությունից դուրս մղված, բայց իրենց կողմից պահպանված գրի միջոցով պահպանել ու տարածել հին գիտելիքը, պահպանել ազգային կրոնի հիշողությունը:



Նկար 2.

ա) Մեսրոպ Մաշտոցի «ճգնության» վայրը, բ, գ) ժայռապատկերներ Տապանասարից:

Այդ միջավայրի ծնունդն էր ու այդ միջավայրում գործեց նաև Մեսրոպ Մաշտոցը: Վռամշապուհ արքայի և Սահակ Պարթևի առջև Հայոց տառերի ստեղծման խնդիրը դնելուց առաջ Մեսրոպ Մաշտոցը այցելում և երկար ժամանակ մնում է («ճգնում է») Գողթան գավառում: Ինչ էր փնտրում արքայական դիվանի գրագիրն այդ վայրերում: Այցելության նպատակն անշուշտ պիտի կապված լիներ նրա պրոֆեսիոնալ գործունեության հետ: Այս պարագայում միակ տրամաբանական բացատրությունն այն է, որ Գողթան գավառը Հայոց հնագույն ժայռապատկերների ժայռապատկերների կուտակման կենտրոններից մեկն է: Սույն աշխատանքում այդ կապը բացահայտելու խնդիրն է դրված:

2. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԱՆՎԱՆ ԱՍՈՒԳԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մաշտոցի իրական անունն ու տոհմանունը մեզ անհայտ է: Հայտնի է միայն, որ նա ծնվել է Տարսնի Հացեկաց գյուղում, պատկանել է ազնվական տոհմի և հոր անունը եղել է Վարդան: Նրան անձամբ ճանաչած և աշակերտած պատմիչները, ովքեր հետագայում այս կամ այն չափով անդրադարձել են նրա գործունեությանը, նրա իրական անունը չեն հիշատակում: Այս փաստից բխում է, որ Մեսրոպ Մաշտոցն իր նոր անունն ընդունել է աշակերտներ վերցնելուց և տառերի փնտրությունները սկսելուց շատ առաջ և հետագայում միշտ ներկայացել է այդ անունով:

Նրա աշակերտներն ու ժամանակակիցները չեն հաղորդում նաև Մեսրոպ և Մաշտոց անունների իմաստները, որովհետև դա էլ չգիտելիք: Մտեփանոս Օրբելյանը հաղորդում է, թե Ներսես Մեծ կալ՝ խողիկոսը Սյունիքի եպիսկոպոս է ձեռնադրել ոմ Մաշտոցի: Իմա Մաշտոց անունը գոյություն է ունեցել Մեսրոպից առաջ: Մեսրոպ Մաշտոցից հետո ևս Մաշտոց անունով մի շարք հոգևորականներ են ձեռնադրվել (Մաշտոց – եպիսկոպոս Խորխոռունիքի (VI դ), Մաշտոց Եղիվարդեցի – Հայոց կաթողիկոս (IXդ) և այլն):

Մատենագրության մեջ Մաշտոց անունը վկայված է նաև Մաշոց, Մաժոց և Մաշթոց ձևերով: Հ. Աճառյանն իր Հայոց անձնանունների բառարանում գրում է, թե Մաշտոց անվան ծագումն անհայտ է: Քանզի անիմաստ անձնանուն չի լինում, ուրեմն ակնհայտ է, որ Մաշտոց անվան իմաստը մոռացվել է:

Մաշտոց անվան «-ոց» վերջավորությունը կարող է լինել գործիք (տոց, խարտոց և այլն) կամ տեղ (դարբնոց, դպրոց և այլն) ցույց տվող «-ոց» վերջածանցը կամ էլ «ո» հոլովման բառերի հոգնակի սեռականի «-ոց» մասնիկը (թռչուն-թռչնոց, գործ-գործոց և այլն): Առաջին տարբերակները անձնանվանման պարագայում ընդունելի չեն: Հետևաբար մնում է կարծել, որ Մաշտոցը «մաշտ» բառի հոգնակի սեռական ձևն է. Մեսրոպ Մաշտոց = Մեսրոպ Մաշտերի: Ուրեմն Մաշտոց անունը պիտի կազմված լինի «մաշտ/մաշո/մաշթ» եզակի ուղղական հոլովաձևից:

Հայերենում ունենք մաշտ=«ճաղատ» բառը, որը կտա Մեսրոպ Մաշ-

տոց = «Մեսրոպ ճաղատների» իմաստ: Այստեղ էլ մեկնաբանման միակ տարբերակն այն է, եթե ենթադրենք, թե քրիստոնեությունից առաջ եղել է սափրագլուխ քրմերի դաս: Մակայն այս մասին ոչ մի ուղղակի տվյալ չունենք:

Մեզ մնում է ենթադրել, որ «մաշտ, մաշո» բառը, որպես հասարակ գոյական, մոռացվել և պահպանվել է միայն Մաշտոց հատուկ անվան մեջ: Այս մոռացված բառի հետքերը մեզ տանում են սեպագրության ժամանակները:

ԸՆԴՄԻՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Շումերերեն MAŠ.DU3 գրությունը, նրա ընթերցումներն ու իմաստները Շումերերենում գրչության ասպարեզին պատկանող գործածական

տերմիններից է HAR, HUR =  = har, hur = «խազել, գծել, քերծել, նկարել», որի հայերեն կրկնակն է har, hur = հար = «դրոշմել, արձանագրել»: HAR սեպանշանի ամենագործածական իմաստներից է եղել «շրջան, շրջանագիծ» իմաստը, որի համապատասխան ընթերցումն է HAR, HUR = hir2 = հիր, որը հայերենում կրում է հենց «շրջան, պտույտ» իմաստ:

Շումերերենում har, hur բառին երբեմն կցագրվել է GİŠ = «ծառ, փայտ» գաղափարագիրը (GİŠ - har) և այդ կցագրությունը ոչ միայն պահպանել է «գծել, նկարել» բայական իմաստը, այլ ավելին՝ ձեռք է բերել առարկայական (գոյական) իմաստ. «նախագիծ, գծագիր, նկար»: Երկու դեպքում էլ (har և giš-har), որպես աքքադերեն գուգահեռ, գրվել է ešēru = «գծել, նկարել, պատկերել» բայը (կարդա՝ «էջերու»):

GİŠ - har = «գծել, նկարել, պատկերել» գրությունը կիրառվել է նաև այլ սեպագիր լեզուներում, այդ թվում՝ սեպագիր խեթերերում: Ահա թե ինչ են գրում այդ մասին Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը.

«Существует предположение, что еще до возникновения у хеттов клинообразной системы письма, иероглифическая письменность применялась для записи текстов на дереве. Сохранился даже специальный термин, обозначающий «надписи на дереве» GİŠ.HUR, которое могли быть выполнены только иероглифическим письмом, а так же обозначение «писцов на дереве» DUB.SAR.GİŠ. Многие клинописные хеттские тексты, по-видимому, возникли благодаря последующему переписыванию хеттских текстов, составленных первоначально иероглифическим письмом. Такие тексты помечены формулой A.NA GİŠ.HUR (TE) -kan handan «согласно деревянной надписи». В случае, если можно будет неопровержимо доказать использование хеттами этого письма, его следовало бы признать весьма древним и в сущности единственной известной пока древней системой письма, созданной собственно для индоевропейского языка».¹

Ամբողջովին ենթադրությունների վրա կառուցված այս հատվածի հիմքում հեղինակները դրել են GİŠ.HUR = «надпись на дереве», DUB.SAR.GİŠ = «писец на дереве», A.NA GİŠ.HUR (TE) -kan handan = «согласно деревянной надписи» իմաստները: Արդյո՞ք ճիշտ են խեթերենի համար բերվող այս իմաստները և շումերերենում GİŠ.HUR/HAR = «գծել, նկարել» իմաստի դեպքում ինչ ընթերցում և իմաստ է ներկայացնում GİŠ սեպանշանը:

Դպրության հետ GİŠ գաղափարագրի ուղղակի կապը ցուցադրում են նրա տարբերակները, իսկ այդ կապը հնարավոր է տեսնել միայն ու միայն հայերենի միջոցով: Այս գաղափարագրի համար վերականգնված մոտ 30 տարբերակների մեջ տեսնում ենք giš, giš, giš = qih2, որոնք անմիջապես կապված են «գիր, գրել, գրություն» իմաստների հետ (qih2 = «գիր, գրվածք, ուղիղ շարք, տող», նիշ = «նշան, կետ, հետք, արքունի նշան»):²

Ջետաբար շումերերենում վկայված և ապա խեթերենին ու մյուս սեպագիր լեզուներին որպես քարացած կաղապար անցած GİŠ.HAR = giš - har = niš2 - har = նիշ (=նշան) + հար (=դրոշմել,

արձանագրել) կցագրությունը հայերեն կազմություն է և ունի «նշան դրոշմել, նշան արձանագրել» իմաստ:

Արդյունքում, վերը բերված խեթերեն A.NA GİŠ.HUR (TE) -kan handan արտահայտության «согласно деревянной надписи» անտրամաբանական թարգմանության փոխարեն կունենանք «համաձայն նշանագրային գրության»: Շումերերենում «նշան, նշանակ, նախանշանակ» իմաստները կրող գրեթե բոլոր բառերը սկսվում են giš = niš2 = նիշ բառով (giš-an-ti-bal, giš-ti-bal, giškim, giš-igi-šal2 և այլն):

Հայերենում պահպանվել է նաև GİŠ գաղափարագրի giš/geš ընթերցումները: Դրա օրինակներից է կշիռ = «կշեռք» բառը (բարբառներում նաև գիշեռք, գիշիռք, գիշառք, գշեռք): Լեզվաբանները հայերեն «կշիռ»-ը փոխառություն են դնում ասուրերեն gišrinu = «կշեռք» բառից: Սակայն վերջինս գալիս է աքքադերեն gišrinu = «կշեռք» բառից, իսկ սա իր հերթին փոխառություն է շումերեն giš-rin2 = gišrin = կշիռն, կշիռ բառից, որը բարդված է giš = «փայտ» և rin2, erin2, erem, erim = «լուծ» բառերից: Հետևաբար gišrin = կշիռն, կշիռ բառը հայ-շումերեն է, որից էլ անցել է սեմական լեզուներին:

Հայերենը հնարավորություն է տալիս ևս մի կարևոր օրինակի հիման վրա բացատրել GİŠ գաղափարագրի niš2 ընթերցման անհրաժեշտությունն ու իմաստը: Խոսքը վերաբերում է Արևի Աստծո անվան գրելաձևերից մեկին. dGİŠ.NU (կամ dGİŠ.NU11) = Šamaš:3 GİŠ.NU գրությունը որպես հասարակ գոյական ունի «լույս» իմաստ: Այն կազմված է GİŠ = «ծառ, փայտ» և NU = «ան-, ոչ» գաղափարագրերից, որոնցից ոչ մեկը կապ չունեն «արև, լույս» գաղափարների հետ: Այդ կապը բացահայտելու համար գաղափարագիր գրելաձևը վանկա-գրեմ էլենվոլ այն փաստից, որ GİŠ գաղափարագիրն ունի niš2, իսկ NU գաղափարագիրը՝ ul2 ընթերցում: Արդյունքում կունենանք GİŠ.NU = niš2 - ul2 = nišul = նշոլ, նշող = «շողք, ցուլ, լույս, ճառագայթ», իսկ «նշող, նշոյլ» բառը բնիկ հայերեն է և կազմված է «նի-» մասնիկով և «շող» արմատով: Հետևաբար շումերերենը Արևի իրենց Աստծուն անվանել են Նշող Աստված = «շողքի, ցուլի, լույսի աստված»: Հայերենում այսիմաստ «նշող» բառը համանուն է նշող = «նիշ դնող, նիշ տվող, նիշ անող» բառին, որը «նշել» բայի ենթակայական դերբայն է: Արևի Աստծո Նշող անունը կարող էր և այս իմաստով հասկացվել ու գործածվել քանի որ Արևն է տալիս տարվա եղանակների փոփոխության նշանները, ինչը կարևոր նշանակություն ուներ երկրագործ և անասնապահ մարդկանց համար:

Ներկայացրինք GİŠ.HUR/HAR = niš2 har = նիշ հար = «նիշ հարել» (աքքադերեն e šē ru = «գծել, նկարել, պատկերել») գրության բայական ձևը: Նույն գրության, արդեն որպես գոյականի, իմաստն արտահայտվել է աքքադերեն u և urtu = «պատկեր, նշան, նկար, գծագիր» բառով:

Անշուշտ այս դեպքում niš2 har = նիշ հար գրությամբ ներկայացվել են սեպագրությանը նախորդած գաղափարագիր գրանշանները, որոնք որոշակի առարկաների պարզեցված գծային պատկերներ էին նշանագրեր: Իմա՞ն niš2 har = նիշ հար = «նշանագիր»:

Վերջապես պարզում ենք, որ GİŠ.HUR/HAR գրությունից գատ, աքքադերեն u և urtu բառով է արտահայտվել նաև շումերերեն MAŠ.DU3 գրության իմաստը.

ma-aš2-da = MAŠ.DU3 = u2-šu2-ra-tum (A I/6 129):

Հաշվի առնելով DA սեպանշանի da, ta2, du20, քա ընթերցումները և DU3 սեպանշանի da3, du3, tu20 ընթերցումները, MAŠ.DU3 գրության համար կարող ենք կազմել հետևյալ տարբերակները.

ma-aš2-da = ma-aš2-ta2 = mašta
= ma-aš2-du20 = mašdu
= ma-aš2- ta = mašta
= ma-aš2- da = mašda
MAŠ.DU3 = maš - du3 = mašdu
= maš - da3 = mašda
= maš - tu20 = maštu

Արդյունքում ստանում ենք բառի mašd, mašt, mašt ուղիղ ձևերը,

¹ Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, Тбилиси, 1984, т. 2, стр. 899

² Հետևելով Հ. Հյուբշմանին և հայերեն «նիշ» բառը փոխառություն համարելով պահլավերեն ենթադրյալ *niš բառից, ահա թե ինչ է գրում Հ. Աճառյանը. «Պիլ. *niš բառից, որ թեև առանձնաձև չէ իրական գրականության մեջ, բայց նրա գոյությունն են ապացուցում՝ հայերենից ջոկ իրանեանից փոխառեալ ասոր. nišā «նշան, դրոշ, նշանակություն, նպատակ, օրինակ, նիւթ» և քրդ. niš «նշան, ցուցանիշ»... Ոմանք ասոր. nišā, nišā «նշան» բառը կցելով երբ. nēs «նշան, իբր նշան տնկում ձող», արամ. nišā, nēsā «նշան, հրաշք» բառերին, համարում են բնիկ սեմական, փոխառեալ ասոր. nišā «կանգնեցնել, բարձրացնել (ձեռք, աչք լաղօթս, լերկինս)» ձևից... Այս պարագային հայը փոխառեալ կլինի ասորականից» (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բա-

ռարան, տես «նիշ» բառահոգվածը): Ակնհայտ է, որ լեզվաբաններին անհայտ է բառի ծագումը, սակայն դիմելով անճարակ հիմնավորումների, որոնցից նույնիսկ խաբեության հոտ է գալիս, փորձում են հայերեն բառն անպայման փոխառություն դարձնել: Երբ լեզվաբանները ստուգաբանում էին այս բառը, հայտնի էր GİŠ գաղափարագրի niš2 ընթերցումը և նրա գործածությունը «նիշ, նշան» իմաստով, որը իմաստային առումով ոչ մի կապ չունի ասուրերեն niš «կանգնեցնել, բարձրացնել» և աքքադերեն nišā = «ժողովուրդ» բառերի հետ: Փաստն այն է, որ 5000 տարի առաջ «նիշ» բառը գործածել են շումերերեն և մինչև այժմ գործածում են հայերը և այն երբեք չի գործածվել իրանական ու ասուրական լեզուներում: Քանի որ «նիշ» արմատից են կազմված հայերեն «նշան», «նշանակ», «նշմար» բառերը, ապա հայերենից փոխառություն պիտի դրվեն այս բառերի պահլավերեն, նոր պարսկերեն, ասորերեն ձևերը:

³ R. Borger, Assyrisch-Babylonische Zeichenliste, Neukirchen-Vluyn, 1978, s. 123

40

որոնք համապատասխանում են մատենագրության մեջ Մաշտոց անվան վկայված Մաշդոց, Մաժդոց, Մաշտոց, Մաշթոց ձևերին:
Վերադառնալով մեր բուն նյութին:

* * *

Շումերերենի օգնությամբ պարզեցինք, որ *mašdu*, *mašda* = մաշդ, մաշտ բառն ունի «նշանագիր» իմաստ: Հետևաբար բառի հոգնակի սեռական ձևը կլինի մաշդոց, մաշտոց = «նշանագրերի»: Քանի որ այս վերջի ձևը հայերենում վկայված է որպես անձնանուն, ապա այն նախապես, որպես մակդիր, պիտի տրվեր այն մարդկանց, ովքեր կարող էին նշանագրերով գրել կամ նշանագրերով գրվածն ընթերցել: Իմա որպես առանձին անձնանուն, Մաշտոց նշանակել է «նշանագրերի (գիտակ)»:

Այժմ անդրադառնալով Մաշտոցի անվան Մեսրոպ բաղադրիչին: Հ. Աճառյանը Մեսրոպ անվան մասին գրում է, թե «ծագումն անհայտ. ստուգաբանված է սերովրե բառով»: Մաշտոցի ապրած տարիներից շատ ավելի ուշ արված այս կեղծ ստուգաբանությունն էլ պատճառ է դարձել, որպեսզի ուշ շրջանի մատենագրության մեջ հայտնվեն անվան Մեսրոպ, Մեսրովր, Մեսրովպ ձևերը, որոնք հնարվել են անունը «սերովրե» բառին մերձեցնելու համար:

Իրականում, ինչպես անվան Մաշտոց բաղադրիչը, Մեսրոպ-ը ևս մաքուր հայերեն կազմություն է և ոչ մի կապ չունի «սերովրե» բառի հետ:

Մեսրոպ անունը մասնատում ենք «մես» և «րոպ» բաղադրիչների: Մրանցից «մես» բաղադրիչը նույնացնում ենք Երեմիա Մեղրեցու բառարանում վկայված մես = «սովոր» բառի հետ (սովոր=«վարժ, գիտակ, սովորած»), որից սովորել=«վարժվել, գիտելիք առնել, ուսանել»: Իր Հայերեն արմատական բառարանում Հ. Աճառյանը բերում է նույն բառի ամանցված «մեսություն» ձևը: Այս բառը վկայված է Գրիգոր Տաթևացու «Մակեփորիկ» աշխատության մեջ. «Մեսությունն առանց կրթութեան, գիտութիւն և առանց բայի»: Հ. Աճառյանը բառի արմատը դնում է «մես» և վերագրում «գիտություն, իմացություն» իմաստ:

Այժմ դառնալով Մեսրոպ անվան «րոպ» բաղադրիչին: Սա էլ ներկայացնում է բնիկ հայերեն «րոպե, րոպ» բառը: Այս բառը, բացի հանրահայտ «Ժամանակի միավոր» իմաստից ունի նաև «տիեզերք, ողջ աշխարհը, ժամանակը», «կյոք, շրջանակ, ոլորակ» և «բովանդակություն էից» իմաստները:⁴

Ելնելով մեր խնդրի համատեքստից, Մեսրոպ անվան «րոպ» բաղադրիչի համար վերցնում ենք «րոպե, րոպ» բառի «բովանդակություն էից» իմաստը: Այստեղ էից=«գոյությունների, եղողների, ամենի» բառը ներկայացնում է է=«եղող, գոյություն ունեցող» միահնչյուն արմատի հոգնակի սեռական ձևը: Արդյունքում, եթե միավորենք Մեսրոպ անվան երկու բաղադրիչները, ապա կունենանք.

մեսրոպ = մես րոպ = «գիտություն գոյությունների բովանդակության», որպես հասարակ գոյական:

Անձնանվան պարագայում կարծում ենք մես=«գիտություն» իմաստի փոխարեն հարկ է հասկանալ մես=«գիտակ»: Այս դեպքում բուն Մեսրոպ անձնանվան համար կունենանք հետևյալ իմաստը.

Մեսրոպ = մես րոպ = «գիտակ գոյությունների բովանդակության»:

Անվան երկու բաղադրիչները միացնելով իրար, կստանանք Մեսրոպ Մաշտոց անվան արտահայտած իմաստի ամբողջական պատկերը.

Մեսրոպ Մաշտոց = մես րոպ մաշտոց = «գիտակ գոյությունների բովանդակության նշանագրերի» կամ «գիտակ նշանագրերի իմաստների»: Այստեղ էից=«գոյությունների» բառի տակ հարկ է հասկանալ այն առարկաները (կենդանիներ, բույսեր, գործիքներ և այլն), որոնց պատկերները գործածվել են որպես գաղափարագիր գրանշաններ:

Ենթադրելով, որ Մաշտոցն ինքն է ընտրել իր Մեսրոպ Մաշտոց կեղծանունը, վերջնականապես կարող ենք փաստել, որ, դեռևս

⁴ Հ. Աճառյանը հետևելով Հ. Հյուբշմանին, հայերեն «րոպե, րոպ» բառը փոխառություն է դնում հունարեն ροπή=«րոպե, moment» բառից, իսկ վերջինս ծագած են համարում ρεπω=«ծռել» բայից: Նախ հայերեն բառի «տիեզերք, ամբողջ աշխարհ» ընդհանրական իմաստը բացակայում է հունարենում: Երկրորդ ժամանակի և ժամանակի մասերի բաժանելու գաղափարը ծագել է պտույտի գաղափարից (երկնային լուսատուների տեսանելի պտույտը Երկրի շուրջը): Հայերեն «րոպե, րոպ» բառը «Ժամանակ» իմաստի հետ ունի նաև այս նախնական իմաստը («կյոք, շրջան, ոլորակ») և կարիք չունի այլ լեզվից փոխառություն կատարելու: Քանի որ հայերեն բառի իմաստներն ավելի ընդհանրական են («տիեզերք, ժամանակ») և նախնական («կյոք, շրջան»), իսկ հունարեն բառը կրում է մասնավոր և երկրորդային իմաստ, ապա հարկ է հունարեն բառը փոխառություն դնել հայերենից:

Հայոց գրանշանների փնտրտուքները սկսելուց առաջ, ինքն իրեն համարել է նշանագրերի իմաստների գիտակ:

3. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՀՆԶՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ 36 ԹԻՎԸ

3.1 36 ԹՎԻ ԽՈՐՀՈՐԴԸ

Ի՞նչ էր փնտրում Մեսրոպ Մաշտոցը՝ նշանագրերի իմաստնոց գիտակը: Լինելով իր ժամանակի ամենաուսույալ անձերից մեկը, ծանոթ լինելով Մերձավոր Արեւելքում գործածվող այբուբենական գրերին, Մաշտոցն իր առջև խնդիր էր դրել գտնել կամ ստեղծել հնչյունական գիր հայերենի համար:

Այդ խնդրի իրագործման առաջին և նախապատրաստական քայլը պիտի լիներ Հայոց լեզվի հնչյունների (ձայնավորների ու բաղաձայնների) քանակի որոշումը: Անշուշտ այդ խնդիրը Մաշտոցը պիտի լուծեր գրերի փնտրտուքները սկսելուց շատ առաջ: Մաշտոցն այդ խնդիրը լուծել է ինքնուրույն, թե օգտվել է ինչ որ սկզբնաղբյուրից, մենք չգիտենք:

Ժամանակակից լեզվաբանությունը պնդում է, թե գրաբարն ունեցել է 5 ձայնավոր (ա, ե, ը, ի, ո), իսկ է-ն հնչել է որպես երկբարբառ (է): Դա անշուշտ միայն ենթադրություն է, որն անհնար է ստուգել: Փաստն այն է, որ «ե» և «է» հնչյուններն այնքան զգալի են տարբերվել, որ Մաշտոցը նրանց համար դրել է առանձին տառանշաններ: Այն հավանաբար հստակ հնչել է որպես «է», սակայն «ե»-ի համեմատ ունեցել է շատ կարճ հնչողություն: Իմա հայերենն ունեցել է կարճ և երկար «ե» հնչյուններ:

Ելնելով այս մեկնաբանությունից, գտնում ենք, որ հայերենն ունեցել է 6 ձայնավոր և 30 բաղաձայն հնչյուններ: Այս առումով հայերենն աշխարհի այն միակ լեզուն է, որն իր դասական գրավոր խոսքում ունի 36 հնչյուն և բնականաբար 36 գրանշան: Հետևաբար կարող ենք փաստել, որ գրանշանների փնտրտուքից առաջ Մաշտոցը գիտեր, որ Հայոց լեզվին անհրաժեշտ են 36 տառեր (6 ձայնավոր+30 բաղաձայն):

Հայտնի է, որ սկսած հնագույն ժամանակներից, 36 թվին վերագրվել է աստվածային, տիեզերական խորհուրդ: Որտեղից ծագել է 36 թվի խորհուրդը, այնտեղից էլ պիտի ծագեր Հայոց լեզուն, որպես այդ տիեզերական խորհրդի բաղադրիչ ու արտահայտիչ:

Ենթադրում ենք, որ այս ամենի մասին, եթե ոչ հստակ տեղեկություններ, ապա գոնե որոշակի լուրեր էին հասել Մաշտոցին, որոնք էլ պիտի ուղղորդեին նրան:

Վրացական և աղվանական գրերի ստեղծման վերաբերյալ պատմիչների հաղորդած տվյալները վկայում են, որ Մաշտոցի համար այբուբենական գրանշաններ ստեղծելը բարդ գործ չի եղել: Վրացիների ու աղվանների համար Մաշտոցը տառեր ստեղծեց հաշված օրերի ընթացքում: Այդ գործում Մաշտոցի համար միակ դժվարությունը լեզուն իմացողի միջոցով տվյալ լեզվի հնչյունների առանձնացումն էր, իսկ ամեն հնչյունի համար նա տառանշան գծագրեց առանց դժվարության ու արագ:

Քանի որ Մաշտոցը գիտեր, որ հայերենն ունի 36 հնչյուն, ինչու՞ նույն կերպ տառեր չգծագրեց հայերենի համար: Ի՞նչ էր նա փնտրում տարիներ շարունակ:

Այս հարցն ունի միաթեք պատասխան. Մաշտոցը փնտրում էր Հայոց աստվածատուր սրբազան գրանշանները:

Դեռևս գրի ծագման ժամանակներում է ձևավորվել այն ավանդույթը, թե գիրը աստվածաշնորհ պարգև է: Հին աշխարհի բոլոր ժողովուրդները, որոնք գիր ու գրչություն ունեցան, գիրը համարեցին աստվածային տեղծագործություն ու գրի ստեղծումը վերագրեցին իրենց դիցաբանում առաջնային դիրք ունեցող Աստծո (dEN.KI=Հայ, Թոթ, Հերմես, Օդին և այլն): Գրի կարևորության և աստվածային ծագման ավանդույթն այնքան կայուն ու հզոր էր, որ Ք.ա. I հազ. երկրորդ կեսին Հին կտակարանը գրառող հեղինակները չէին կարող անտեսել այն. «Եւ տախտակսն գործ Աստուծոյ էին. եւ գիրն գիր Աստուծոյ դրոշմեալ ի տախտակսն» (Ելից լր, 16):

Այս պատկերացումներն ու ավանդույթն ընդգրկող համակարգի մաս էր կազմում նաև 36 թվին վերագրվող խորհուրդը: Հույն հեղինակ Պլուտարքոսը (I դար) իր «Բիդայի և Օսիրիսի մասին» տրակտատում 36 թվի մասին գրում է, թե «36 թիվը, ինչպես հանրահայտ է, եղել է գերագույն երդումը և կոչվել է Տիեզերք» (Օ6 Ίσιδα և Օսիրիս, 75): Պլուտարքոսի գրածից բխում է, որ այս պատկերացումը հին աշխարհում տարածված էր («հանրահայտ է»), բայց հեղինակի ժամանակ ու նրա միջավայրում՝ մոռացված (խոսում է անցյալ ժամանակով. «եղել է», կոչվել է»):

Դրա մասին է վկայում նաև Պլուտարքոսի մեկնաբանությունը: Նա 36 թվի մասին վերը բերված բնութագիրը բացատրում է այսպես. «Քանի որ այն կազմված է առաջին 4 գույն և 4 կենտ թվերի գումարից»:⁵ Սա թեև մեխանիկական մոտեցում է, սակայն հուշում է,

Շատերը չգիտեն՝ ով է իրականում Ավրորան

Ավրորա (Արշալույս) Մարտիրոսյան: Ծնվել է 1901 թ. հունվարի 12-ին՝ Արևմտյան Հայաստանի Խարբերդ նահանգի Չմշկաձագ գյուղում:

Նրա հայրը հարուստ դրամագործ էր և ճանաչված անձնավորություն: Արշալույսն ուներ չորս եղբայր և երեք քույր:

1915 թ.-ին Արշալույսը, ով ընդամենը 14 տարեկան աղջնակ էր, իր աչքերով տեսնում է հոր, մոր, եղբայրների և քույրերի դաժան սպանությունը: Արշալույսն առանցվում է գաղթի ճանապարհին, 85 ցենտով վաճառվում Մալաթիայի եւ Ուրֆայի ստրկավաճառների շուկաներում: Անցնելով դժոխքի միջով՝ նրան հաջողվում է փախչել հարեմից, անցնել ռազմաճակատի զինքը եւ Ջորավար Անդրանիկի միջնորդությամբ տեղափոխվել ԱՄՆ:

Նա մեկնեց այդ երկիր՝ ոչ միայն փրկվելու, այլև հասցնելու մեծն Ջորավարի հայտնի ուղերձը՝ ամերիկացիներին: Նա պետք է աշխարհին հաղորդակից դարձներ հայերի դեմ իրագործած ցեղասպանության մասին:




Այդ առաքելությունը նա փայլուն կատարեց: 1918 թ.-ին ԱՄՆ-ում հրատարակվեց նրա հուշագրությունը՝ «Հռչակված Հայաստան» (Ravished Armenia) գիրքը:

1918 թ.-ին նկարահանվեց Հայոց ցեղասպանության մասին պատմող առաջին գեղարվեստական ֆիլմը՝ Ravished Armenia, որի սցենարի հեղինակն ու գլխավոր դերակատարն Արշալույս Մարտիրոսյանն էր: Բացառիկ դիտելիություն է ունենում ֆիլմն ամբողջ աշխարհում՝ բերելով 30 միլիոն դոլարի եկամուտ, որը տրամադրվեց Մերձավոր Արևելքի 60 հազար հայ որբերի կենսամակարդակի ապահովմանը:

Ավրորայի պատմությունն ու ֆիլմը շուտով փակի տակ դրվեց եւ մոռացվեց, արգելափակված ֆիլմի հետ մոռացվեց նաև Ավրորան, ով մահացավ 1994 թ.-ին 93 տարեկան հասակում: Մահացավ մոռացության մեջ, մերժված բոլորի կողմից, սակայն նա երկին պետք է հայտնվի նոր առաքելությամբ ու նոր պատգամով... Հանաչենք Ավրորային, մեր Արշալույսին:

50

Թե 36 թվի խորհուրդը մեկնաբանելու համար անհրաժեշտ է իմանալ 1÷8, 16, 20 թվերի խորհուրդները:



Նկար 3. Միջնադարյան քարե կոթողներ, որոնց վրա 36 թիվը ներկայացված է եռանկյունային թվի տեսքով:

Մույն աշխատանքի այս փուլի խնդիրը 36 թվի խորհրդի մեկնաբանությունն է, ուստի դրա վրա կանգ չենք առնի: Պարզապես փաստացի նյութով ցույց տանք, որ քրիստոնեական ժամանակների

Հայաստանում ևս 36 թվի խորհուրդը հայտնի էր որոշ գիտական շրջանակների և մասնավորապես հայտնի էր Մեսրոպ Մաշտոցին:

Նրանց վրա նկատելի են երկրորդային մշակման և օգտագործման հետքեր, ինչը հիմք է տալիս կարծելու, թե քարակոթողներն ունեն նախաքրիստոնեական ծագում:

Առաջին կոթողի (Որոտնավանք) վրա եռանկյան պատկերից ձախ հստակ երևում է շրջանաձև նշանագրի կետը: Մյուս կետը ոչնչացվել է կոթողի երկրորդային մշակման ժամանակ:

Երրորդ կոթողը ևս Որոտնավանքում է և տեղադրված է եկեղեցու պատի հիմքում, կրում է երկրորդային մշակության հետքեր: Եթե քարի վրայի նշանները փորագրված լինեին քրիստոնեական շրջանում, ապա այն կտեղադրվեր ավելի պատվավոր տեղում: Կոթողի վերին շարքի քարերը (տարբեր աստիճանի մշակված, տարբեր տեսակի) ևս վկայում են, որ պատկանել են մի այլ շինության և հետագայում օգտագործվել եկեղեցու պատի մեջ:

Խոսքը վերաբերում է միջնադարյան այն քարե կոթողներին, որոնց վրա 36 թիվը ներկայացված է եռանկյունային թվի տեսքով (եռանկյունային թվի և 36 թվի ժամանակակից գործածությանն ու մաթեմատիկական հատկություններին ընթերցողը կարող է ծանոթանալ Wikipedia-ի համապատասխան հոդվածներից):

Այդ կոթողների վրա (տես նկար 3) փորագրված փոքր եռանկյունիների (սեպերի) հորիզոնական շարքի միջոցով ներկայացված են 1-ից 8 թվերը. առաջին շարքում 1 թիվը մի եռանկյունի է, երկրորդ շարքում 2 թիվը 2 եռանկյունի և այլն: Փոքր եռանկյունիների թիվը 36 է և ներկայացնում է 1-ից 8 թվերի գումարը, իսկ բոլոր փոքր եռանկյունիներով (36 թվով) կազմված է մի մեծ հավասարակողմ եռանկյունի:

Հիշյալ կոթողների վրա 36 թվի եռանկյունում կից փորագրվել են այլ նշաններ, որոնք դեռևս վաղ պատկերագրության ժամանակներից հայտնի են որպես նախաքրիստոնեական ազգային դիցարանի որոշակի դիցանունների գաղափարագիր նշաններ:

Օրինակ, նկար 3-ի երրորդ կոթողի աջ կողմի նշանը (շրջանի կամ քառակուսու մեջ ներգծված վեցաթև աստղանշան/վարդյակ) հայտնի է Մյունխենի ժայռապատկերներից և շումերական պատկերագրությունից: Դրանից է ծագել LAGABxHAL սեպանշանը,



որով գաղափարագրվել է ստորգետնյա քաղցրահամ ջրերի ծովի Օրանի Օռվի մի անունը:

Այսպիսով, եթե 36 թիվը, որպես եռանկյունային թիվ, փորագրվել է կոթողների վրա, ապա դա պատմիրոդ կամ կատարող անձիք գաղափար ունեին 36 թվի խորհրդի մասին

Չամկետ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Չնագույն քաղաքակրթությունների հետազոտման կենտրոն

Դասագրքերը լռում են...

1918 Թ. ՉԱՆԳԵՉՈՒՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Չկարողանալով անցնել Միջագետք ու միանալ անգլիական գործերին՝ 1918 թ. հուլիսին Անդրանիկը նահանջում է Նախիջևան, ապա թուրքերի ճնշման տակ՝ Սյունիք։ Օգոստոսի 4-ին շուրջ 30.000 զաղթականներով նա հասնում է Գորիս։ Զանգեզուրի ու Արցախի հայության վիճակը չափազանց ծանր էր։ Օսմանյան հրամանատարությունն ու մուսավաթական կառավարությունը լեռնականներից պահանջում են զինաթափվել եւ ճանաչել Ադրբեջանի գերիշխանությունը։ Լեռնահայաստանը որոշում է կռվել։

Զանգեզուրի Ազգային խորհուրդը Անդրանիկին մեծ լիազորություններ է տալիս եւ ընտրում շրջանի ինքնապաշտպանության ղեկավար։ 1918 թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին երկարատև ու կատաղի կռիվներ են տեղի ունենում թուրք-թաթարական կանոնավոր զորամասերի ու լեռնականների միջև։ Զանգեզուր մտնելու նպատակով Խալիլ բեյը Նախիջևանից ամուր կապ է հաստատում թաթարական ցուղերի հետ՝ նրանց զինելով ու ներգրավելով ռազմական գործողությունների մեջ։ Թշնամին հարվածում էր Զաքուղից ու Օրդուբադից, ինչպես նաև ներսից։

Սյունիքում կար մեծաթիվ թուրք-թաթարական բնակչություն, լավ զինված, թուրք սպաների կողմից մարզվող ու առաջնորդվող ջոկատներ։ Հայկական բնակավայրերի միջև հաղորդակցությունը դժվարացել, կամ իսպառ դադարել էր, քանի որ շրջանի թաթարական (ադրբեջանաբնակ) ցուղերը վերածվել էին ռազմական ամրությունների՝ փակելով ճանապարհներն ու անակնկալ գրոհներով խուճապ առաջացնելով հայ բնակչության շրջանում։ Սովորական երեւոյթ էր դարձել անասնագործությունը, հայ ցուղացիների առեւանգումն ու սպանությունները։ Երկրամասում ցուղատնտեսական աշխատանքները կանգ էին առել։ Տեղաբնակ մուսուլմաններն այնքան սանձարձակ էին դարձել, որ բացահայտ հայտարարում էին, թե Զանգեզուրն ու Ղարաբաղը իրենց սրբազան հողն է եւ այստեղ ոչ մի հայ չի մնալու։

Նրա չի. օգոստոսի 10-ին Անդրանիկը որոշում է չեզոքացնել ներքին վտանգը։ Միսիանի շրջանում շուրջ երեք տասնյակ թաթարական ցուղեր կային, իսկ Կապանի քառասուն ցուղերից միայն չորսն էր հայկական։ Հանդուգն պահվածքով հատկապես աչքի էր ընկնում Գորիս-Միսիան ճանապարհի վրա գտնվող Աղուդի, Վաղուդի եւ Ուրուտ ցուղերի թրջությունը։ Նույնիսկ մեծաքանակ զինվորական ուղեկցությամբ հայերը հազվադեպ էին անցնում այս խճուղային ճանապարհով։ Հայերի գրոհներին թշնամին երկար դիմադրել չի կարողանում։ Անդրանիկը գործի է դնում մեծ ղովարությամբ բարձունքները հանված թնդանոթները, կոտրում թաթարների դիմադրությունը եւ ոչնչացնում հիշյալ ավազակաորդները։ ՀՅԴ հիմնադիրներից Ռոստոմը Բաքվից Անդրանիկին ուղարկած նամակում գրում է. «Ես պիտի գամ Գորիս քու անարատ և սուրբ ճակատդ համբուրե-



լու» (Տե՛ս՝ Գ. Սուրենյան, Ինչու՞ գորավար Անդրանիկ հեռացավ Չ. Չ. Դաշնակցութենէն, Կ. Պոլիս, 1920, էջ 16)։

Անգեղակոթի ճանապարհին հայկական ուժերը հանդիպում են Շաքիի թուրքերի գրոհներին։ Սրանք նույնպես արժանանում են վերոնշյալ ցուղերի ճակատագրին։ Աղուդիի, Վաղուդիի ու Շաքիի թրջության հետ տեղի ունեցածից հետո ահուսարսափ է տարածվում Զանգեզուրի թրջաբնակ բնակավայրերում, որոնք գերադասում են հանդես բերել խոհեմություն եւ հայտարարում են Անդրանիկի իշխանությունը ճանաչելու ու նրան հպատակվելու մասին։ Կապանի թաթարական ցուղերը եղ ու ոչխար էին մորթում Զորավարի ոտքերի առջև եւ աղերսում իրենց հանդեպ գթասիրտ լինել։

Օգոստոսի 30-ին Անդրանիկը մտնում է Անգեղակոթ եւ այնտեղ հաստատում իր ռազմակայանը։ Նա ձեռնամուխ է լինում գորակռի կազմակերպման, Հարվածային զորամասի համալրման ու մարտունակության բարձրացման, գործը մթերքով ու սպառազինությամբ ապահովելու գործին։ Խստացվում է կարգապահությունը, ռազմական վարժանքներն ու մարզումները դառնում են ամենօրյա եւ հատկապես ժամանակացույցով։ Զորահավաքը մեծ ղովարությամբ, բայց ընդհանուր առմամբ հաջողությամբ է իրականացվում, ստեղծվում են հատուկ դիտակետեր, նոր վաշտեր ու գումարտակներ, ցուղերում զինված խմբեր, որոնք ենթարկվում են ընդհանուր հրամանատարությանը։ Ամբողջ Սյունիքը վերածվում է ռազմական ճամբարի եւ ամենուր իրականացվում է մարտական հերթապահություն։

Հետախուզական տեղեկությունների համաձայն թուրք-թաթարական ուժերը 1918 թ. սեպտեմբերի կեսերին Միսիանի ուղղությամբ անցնելու էին վճռական գործողությունների։ Անդրանիկը որոշում է կանխել թշնամուն եւ նախահարձակ

լինել։ Սեպտեմբերի 10 (23)-ի գիշերը Հարվածային զորամասը սկսում է գրոհը։ Վնասագերծվում են Միսիան-Օրդուբադ ճանապարհին գտնվող թրջաբնակ ցուղերը։ Թաթարները հազարներով թողնելով իրենց բնակավայրերը, գույքն ու անասուններին ահաբեկված փախչում են Նախիջևանի ուղղությամբ։

1918 թ. սեպտեմբերին Զանգեզուրի թուրքաբնակ բնակչության հակահայկական ըմբոստությունը և խժոժությունները թևակոխում են ամենաեռուն շրջանը։ Ամսվա երկրորդ կեսին իրադրությունը Զանգեզուրում ավելի բարդացավ։ Բաքվի ու Շուշիի գրավումից հետո օսմանյան ու մուսավաթական գործերը ողջ ուժերը կենտրոնացրին Զանգեզուրը նվաճելու համար եւ ամուր օղակի մեջ առան հայկական երկրամասը։ Օսմանյան զավթիչները մուսավաթական կառավարության տրամադրության տակ դրեցին Արցախն ու Սյունիքը ընկճելու բոլոր միջոցները։ Միաժամանակ հայերի թիկունքը նախապես թուլացնելու համար թուրքական գործերի հրամանատարությունը մեծաքանակ զենք ու ռազմամթերք առաքեց Արցախի ու Զանգեզուրի և հատկապես նրանց միջև սեպի պես խրված Քարվաճառի ու Լաչինի թուրքերին ու քրդերին։

Այս անեղ վտանգի ժամին ցայտուն դրսևորվեց հայ բնակչության գերազանց հատկություններից մեկը, այն է մի կողմ դնել ներքին տարաձայնությունները, համախմբվել, զորահավաքի ենթարկել բոլոր ուժերը, օգտագործել բոլոր հնարավորությունները և ամուր բռնուցք դառնալ թշնամու դեմ։ Սյունիքն Անդրանիկի ու նրա զինակիցների ահեղի, անմխացող ու տրնաջան աշխատանքի արդյունքում կարճ ժամանակում վերածվեց անառիկ ամրոցի, որն այլևս ոչ մի ուժ չէր կարող գրավել։ Սեպտեմբերի 26-ին թուրքերը մեծաքանակ ուժերով անցան հարձակման։ Սկսվեցին կատաղի կռիվներ։ Ութ օր տևած ծանր մարտերում թշնամին տվեց մեծաթիվ զոհեր եւ պարտության մատնվելով նահանջեց ելման դիրքերը։ Այս պարտությունը հայկական երկրամասի թուրք-թաթարական բնակչության մեջ առաջ բերեց բարոյահոգեբանական ծանրագույն վիճակ։

Մահմեդական ցուղերը մաքրագործելու արշավը դադարեցնելու համար Խալիլ փաշան դիմում է ՀՀ կառավարությանը պահանջելով ազդել Անդրանիկի վրա, հակառակ դեպքում սպառնալով պատժիչ միջոցների դիմել։ Իր պատասխանում վարչապետ Քաջազնունին Խալիլին հիշեցնում է, որ Նուրի փաշան Գանձակի նահանգը հայտարարել է ադրբեջանական տարածք, որ ինքը ոչ մի իրավասություն չունի Անդրանիկի վրա եւ Հայաստանը չի կարող պատասխանատվություն կրել Զանգեզուրում տիրող վիճակի համար։

1918 թ. հոկտեմբերի 7-ին Անդրանիկը հրաման է արձակում Գորիսի շրջանում նոր զորահավաք անցկացնելու մասին, ինչն

Պատերազմն ու կինը. Հրամանատար Անահիտ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ

Արցախյան պատերազմին մասնակցել են հարյուրավոր հայ կանայք: Ոմանք գոհվել են մարտի դաշտում, ոմանք վերադարձել ու ապրում մեր կողքին: Նրանց կոչվել, պատմություններն ու անունները, սակայն, շատերին է անհայտ: Մեղիամաքսը մեկնարկում է նոր նախագիծ՝ «Պատերազմն ու կինը», որի շրջանակներում ներկայացնելու ենք պատերազմի կանացի ձայնն ու հիշողությունները:

Այսօր ներկայացնում ենք փոխգնդապետ, Արցախյան պատերազմի միակ կին հրամանատար Անահիտ Մարտիրոսյանի «պատերազմը»:

Փոխգնդապետ Անահիտ Մարտիրոսյան: Մարտի դաշտում՝ հրամանատար: Անահիտը ծնվել է 1964 թվականին Չարդախլու գյուղում, որը մարշալներ Բաղդասյանի եւ Բաբաջանյանի հայրենիքն է: 1989-ին Բաքվի ջարդերի ժամանակ, ընտանիքի հետ փորձել է գալ Հայաստան, սակայն աղբյուրներից անհասկանալի պատճառներով կտրել է նրանց ճանապարհն ու ընտանիքի աչքի առջև կյանքից զրկել ամուսնուն: Տարիներ անց մարտի դաշտում, Անահիտին վիճակվել է կրկին հանդիպել ամուսնուն կյանքից զրկողին եւ լուծել վրեժը...

Ղեկավարել է «Անահիտ» հետախուզական ջոկատը:

Երբեք չեմ ձգտել զինվորական դառնալ: Բաքվի նախաքիմիական ինստիտուտում եմ ավարտել, շատ լավ աշխատանք եմ ունեցել ու լավ ապրել, բայց չեմ սիրել դրանց (աղբյուրներից հետո) նկատի ունի-հեղ.:

Իմ մայրենի լեզուն դպրոցում չեմ սովորել. աղբյուրներից եմ ուսուցանել էինք անցնում, բայց տասնից շատ բան էի լսել ու գիտեի, թե ինչ են արել թուրքերը մեր դեմ. տատս ջարդից սարսափելի բաներ էր պատմում:

Դպրոցում շատ լավ էի սովորում, բայց անտանելի չար էի ծեծում էի թուրքերին, էնքան, որ ոչ մեկը չէր համարձակվում ինձ որդեւ բան ասել:

Ոնց չէի սիրում դրանց: Մորս հետ վիճում էի «Քույր Չարդախլուից գնացել է Հայաստան, դու ինչու ես եկել Բաքու, ինչու մենք պետք է Բաքվում ապրենք»: Միշտ ծնողներին մեղադրում էի դրա համար: Մայրս վստահ էր, որ էլ կոչվի չի լինելու, անհանգստանալու կարիք չկա, բայց ես, կարծես, զգում էի հնարավոր չէր թուրքը



Անահիտ Մարտիրոսյանը

չգործեր: Ամեն ինչ շատ հարթ էր, եղբայր չի լինում. հետախուզման մեջ էլ, երբ ամեն ինչ չափից շատ լուր էր, գիտեի, որ փոթորիկ է սկսվելու:

17 տարեկանում ամուսնացա, 24-ում արդեն այրի էի... գոհ տալով հասա Հայաստան: 1989 թիվ էր: Բաքվում էինք ապրում՝ ես, ամուսինս Վիկտորը, երկու տղաներս, մեկը 5, մյուսը 3 տարեկան: Ամեն օր սարսափելի դեպքերի մասին էինք լսում ու ակնառես լինում: Մի օր որոշեցինք վերցնել երեխաներին ու գալ Հայաստան: Հաջորդ առավոտյան ճանապարհ ընկանք: Երկու թաղամաս էլ չէինք անցել մեր շենքից, երբ վայրի ավազակախումբը, որի մեջ մեր հարեանի տղան էր, կտրեց մեր ճանապարհն ու...

Հրաշքով փրկվելով հասանք օդանավակայան, որտեղից Մերձբալտիկայի ինքնաթիռները մեզ ու շատ այլ փախստականների հասցրեցին Երևան:

Երեւանում իմացա, որ ծնողներին ես հաջողվել է փախչել: Բազմաշառնում էին: Գնացինք նրանց մոտ: Մեծ տղաս, որ գիտակցում էր կատարվածն ու հոր հետ պատահածը, մոտ մեկ տարի չխոսեց...

1991-ի հոկտեմբերին տղաներիս թողեցի ծնողներին մոտ ու մեկնեցի առաջին գիծ վրեժ ունեի լուծելու: Ծնողներին, իհարկե, չասացի, թե ուր եմ գնում. ուր ծնողը կթողնի

իր աղջիկը պատերազմ գնա: Ասացի՝ «գնում եմ Ուկրաինա՝ ընկերուհիներին մոտ աշխատելու»: Սպորտսմենուհի էի, դեռ Բաքվում թեթեւ ատլետիկա էի պարապում:

24 տարեկան էի, քաշս՝ 45 կիլոգրամ: Իմ տարիքից շատ ավելի փոքր էի երեւում: Հավաքակալանում չէին թողնում, որ գնամ: Հարցրեցին՝ «ամուսնացած ես», ասացի ոչ: Ասեցին՝ «դե գնա՛, ամուսնացի՛, երեխեք ունեցի՛»: Հետո հայտարարվեց, որ ով աղբյուրներից գիտի, նրանց կտանեն: Իսկ ես հրաշալի եմ տիրապետում այդ լեզվին, ցավոք, իմ մայրենիից էլ շատ ավելի լավ: Այդպես թողեցին գնամ առաջին գիծ որպես բուժքույր:

Առաջին իսկ օրից գեներ բռնել ու կրակել սովորեցրեցին: Իմ գեները եղել է կարաբին, դրանից լավ գեներ չեմ ճանաչում:

Հենց գործով Երեւան էինք գալիս, որոշ ջոկատով խանութներն ընկած ուկրաինական կոնֆետ էինք փնտրում, որ տանեմ երեխեքին: Բայց ստի ոտքը կարճ է, չստացվեց երկար խաբել (ծիծաղում է-հեղ.): Երբ վիրավորվեցի, ծնողներին տուն «սեւ թուղթ» էին ուղարկել, նրանք իմացել էին ճշմարտությունը:

Մարադայից հետո եկել էինք Երևան: Նորից հիվանդանոցում պառկած էին մարտի դաշտից իմ դուստր բերած տղաները: Մորս հանդիպեցի, ասաց՝ «Արի, քո երեխեքին պահի, ես չեմ պահելու»: Նրան տարա հիվանդանոց տղերքի մոտ, ասացի՝ տղաների հետ խոսելուց հետո ինձ կասես գնամ, թե մնամ: Տղերքը, մորս տեսնելով, սկսեցին ձեռքերը խամբուրել ու շնորհակալություն հայտնել ասելով, թե իրենց կյանքն եմ փրկել: Մայրս դուստր եկավ, սրբեց արցունքներն ու ասեց՝ «Ես քո երեխեքին կպահեմ: Գնա՛: Դու իրանց պետք ես»: Էղբեր երեխաներս էլ իմացան, որ իրենց մայրը պատերազմ է գնացել:

Մարադայից հետո, երբ ապաքինվեցին մարտի դաշտից փրկված 13 տղաները, ստեղծվեց «Անահիտ» ջոկատը, որը ենթարկվում էր Արկադի Տեր-Թադևոս-

29

73

իրականացվում է արագ ու հաջողությամբ: Այս անգամ գորակառնում են գեներ բռնելու ունակ 20-50 տարեկանները: Հետագայում գորակառնող դժվարանում է երկրամասում բռնկված համաճարակի պատճառով: 1918 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Արցախի տարբեր շրջաններում թուրք-թաթարական զինված կազմավորումները ծանր պարտություններ են կրում: Խծաբերդի, Տուփի, Մաճալի եւ այլ գյուղերի ինքնապաշտպանական ուժերը հետ են շարժում թշնամու գրոհները: Միաժամանակ Դիզակի ու Վարանդայի հրամանատարները նամակ են ուղարկում Գորիսում գտնվող Անդրանիկին՝ խնդրելով անհապաղ օգնության հասնել:

Այսրկովկասից օսմանյան զորամասերի հեռանալուց (տես՝ Մուղդուսի զինադադար) եւ անգլիացիների տարածաշրջան գալուց հետո՝ Անդրանիկը ձեռնամուկ է լինում Արցախի օգնության հասնելու իր ծրագրի իրագործմանը: 1918 թ. նոյեմբերի 15 (28)-ին, Ջաբրուլի ձորում թուրքերին ջարդելուց հետո, նա սկսում է իր ռազմերթը Շուշի, բայց անգլիացիների միջամտությանը այն կասեցվում է: Անդրանիկին նամակով տեղեկացնում են, որ եթե մտնի Շուշի, ապա այդ քայլը բացասաբար կանդադարանա հայկական հարցի լուծման ընթացքի վրա:

ՀՀ կառավարության 1919 թ. հունվարի 21-ի որոշումով Մյունիքի ու Արցախի ընդհանուր ղեկավարումը ժամանակավորապես հանձնվում է Ջանգեզուրի ազգային խորհրդին, որը վերակազմավորվելու էր Ջան-

գեզուր-Ղարաբաղի ազգային խորհրդի եւ գործելու էր ՀՀ անունից: Խորհրդի կազմը հաստատելու էր ՀՀ կառավարությունը, որի որոշմամբ մտցվում էր նաեւ պետական կոմիսարի պաշտոն: Կոմիսարը, որպես ՀՀ գործադիր իշխանության ներկայացուցիչ, կառավարելու էր Ջանգեզուր-Ղարաբաղի մարզը:

1919 թ. մարտի 12-ին Գորիս է ժամանում պետական կոմիսար նշանակված Արսեն Շահմազյանը: Մարտի վերջին, որոշ քանակությամբ գեներ ու զինամթերք տրամադրելով նրան, Անդրանիկը դուրս է գալիս Գորիսից եւ ապրիլին հասնում Երեւանի գավառ: Էջմիածնում զորամասը լուծարվեց ու գեները կաթողիկոսին հանձնվեց հետո՝ Զորավարը հեռանում է Հայաստանից:

Սիլվա ՍԻՄՈՆԻԱՆ

80

յանին: Պարզեւ Սրբազանը մեզ կցեց նաեւ Ռուսաստանից եկած «Մուրբ խաչի» 14 նվիրյալների խմբին, որոնք եկել էին հայերի հետ միասին կռվելու: Այդպես ստեղծվեց մեր հետախուզական ջոկատը:

Մասնակցել եմ Մարտակերտի շրջանի՝ Մաղավուզ, Կարմիրավան, Մեծշեն, Հոռաթաղ, Դրմբուն եւ այլ տարածքների ինքնապաշտպանական եւ ազատագրական մարտերին:

Մի անգամ շրջափակման մեջ ընկանք: Նրանց լեզուն գիտեի, կարողացանք կողմնորոշվել ու դուրս գալ իրավիճակից, բայց այդ ընթացքում մի պահ հուսահատվեցի, մտածում էի վերջն է: Երեխաների նկարը հանեցի պայուսակից, նայում ու ներդողություն էի խնդրում, որ չեմ կարող իրենց մեծացնել: Ջոկատի տղաները նայեցին ինձ ու ասացին «Հրամանատար, չմտածես, թե գերի ընկնենք, չենք թողի դու կենդանի նրանց ձեռքում հայտնվես»:

Մեզ հիշում են կամ մայիսի 9-ին, կամ որեւէ այլ իրադարձության ժամանակ: Միայն դայրոց կանչելուց է, որ հիվանդ էլ լինեմ, սիրով գնում եմ: Մյուսներեցի, հիշում ասած, արդեն հոգնել եմ: Այնպիսի տպավորություն է, որ մտնում ու սկսում են փոքրիկ քո կյանքը, իսկ պահ է լինում, երբ ուզում ես ամեն ինչ մոռանալ: Առանց այն էլ ես գիշերները չեմ քնում, մոճավանջների մեջ եմ: Ամեն անգամ վերհիշելուց ցավ եմ ապրում... թե էսքանը քեզ ինչի եմ պատմում, չգիտեմ:

Մարադան առաջին գյուղն էր, որտեղ կռվեցի: Մարադայից հետո նորմալ ժապն անհնար էր: Մարադայի ֆիլմերից ավելի ահավորը ես իրականում եմ տեսել. գերեւարված, բռնաբարված ու մորթատանջ արված դիակներ, 6 ամսական եփած հայ երեխաներ, եմ տեսել, մեծ կանանց կտրած գլուխներ. ո՞րը պատմում, ո՞նց պատմեմ...

Մարադան ասես Մուսկվայի ու Բաքվի շարունակությունը լինեք: Գիտե՞ք պատերազմ եմ գնացել մի ցավով, բայց պատերազմի ընթացքում էնքան բան եմ տեսել ու էնքան բան կորցրել, որ հիմա վստահ եմ՝ դրանք անհնար է ներել:

Անգամ 1915 թվից հետո նրանք չհանգստացան: Բայց մեր հայկական հողերը մի օր հետ են գալու, չգիտեմ, թե երբ, ես կարող է ողջ չլինեմ, դուք ասածս կհիշեք. ես դա գգում եմ: Դեռ մարտի դաշտից սկսած՝ ինչ գգում եմ, կատարվում է, դրա համար շատ ժամանակ չեմ խոսում:

Պատերազմ գնալուց առաջ միայն վրեժ էի գգում: Շատ կոտորված էի: Մտածում էի՝ ինչո՞ւ է հենց ես, հետո ինքս ինձ պատասխանում՝ միեւնոյն է, մեկը պետք է լինեք, ինչո՞ւ մե՞ն է հարցը:

Ոչ մեկ չի կարող ասել՝ իր կյանքը ոնց կդասավորվի: Ես սովորական հայ կին եմ, հիշտ է, անսովոր ճակատագրով: Պարզապես ինձ բաժին ընկավ այս բեռը: Ես ամեն ինչ սովորել եմ պատերազմում, ինձ ամեն ինչ սովորեցրել են իմ մարտական ընկերները:

Երբ տատս ցեղասպանությունից էր պաշտմում, լուռ լսում էի: Ասում էր՝ «Անահի տ ջան, դու ի՞նչ ես տեսել՝ ոչ սով, ոչ գաղթ»:

Առոք-փառոք ապրում ես: Իսկ մենք գաղթ ենք տեսել, սով ենք տեսել»: Մարադան տեսնելուց հետո մտքումս խոսում էի տատիս հետ «տա տ, շատ համարեցիր. գաղթն էլ տեսա, մահն էլ, վիշտ էլ, աժա՛կ էլ»:

1992-ի տարեմուտից անընդհատ նահանջող հակառակորդը Դրմբունում անսպասելի դիրքավորվեց եւ սկսեց կատաղի դիմադրություն ցույց տալ: Զինվորներիս հետ մարտի դաշտում էի: Իրենց քաջ ծանոթ տեղանքում ջոկատի տղաներին հաջողվեց հակառակորդին շրջափակման մեջ գցել ու 14 հոգու գերեւարել: Նրանց թվում իմ Բաքվի հարեւանն էր, ում հայրն արդեօ՞հանցի էր, մայրը՝ հայ: Զե՛ի կարող շփոթել, նա էր:

- Հիշեցի ր ինձ:
- Անահիտ քույրի՛կ:
- Անունս չեմ հարցնում: Արմենիքենդի խաչմերուկը հիշու՛մ ես...



Անահիտ Մարտիրոսյանը

Նա վախից խոստովանեց:

Խնդրեց ներել իրեն, բայց նրանց անհնար է ներել... Գիտես, շատ դժվար է մարդ սպանել, սպանել քո նմանին: Ասելու եւ անելու մեջ շատ մեծ տարբերություն կա:

Դրանից հետո մի օր մտա եկեղեցի ու չհասկացա՝ իմ հետ ինչ կատարվեց: Ես իմ մեջից հանեցի ամեն ինչ: Լացում էի իմ ու ընկերներիս համար: Ե՛վ լացում էի, եւ կրկնում «դու ես մեղավոր, դու ես ինձ սարքել էսպիսին, դու թուրքը, դու ես եղել իմ դասատուն ու ստիպել ինձ գնեք վերցնել, քո նմանի վրա կրակել»։ Նրանք փխրում հայ կնոջը զինվորական դարձեցին: Հայ կինը չէր ուզում գնեք բռնել ու կրակել մարդու՝ իր նմանի վրա, բայց նրանք մեզ ստիպեցին այլ ելք չորոշելու:

Կրեժդ լուծելուց բավականություն ես ստանում, մեծ բավականություն: Թուրքը պետք է իմանա, որ 1915 թվի հայը չկա, հիմա հայը պայքարող է, չհանդուրժող, ոչ մի քայլի համար հայը նրան անպատասխան չի թողնելու:

Գիտես, ես, երեւի, լուծեցի իմ վրեժը, բայց դրան զուգահեռ շատ բան կորցրեցի. կորցրեցի իմ հանգիստը, հոգու առանց այդ էլ փոթորկված խաղաղությունը:

Կրեժից բացի ես իմ ջոկատով դիրք եմ ազատագրել: Դրանից վեր ոչինչ չգիտեմ՝ ոչ փող, ոչ ունեցվածք. ոչինչ չի կարող հավասարվել հայրենի հողն ազատագրելու անբացատրելի զգացումի հետ: Մենք մեր հողի գույնն ունենք, չպետք է թույլ տանք, որ դրա վրայով օտարը քայլի:

Երկու անգամ ծանր վիրավորվել եմ, երկու անգամս էլ նույն օրը մեկը 1992-ի, մյուսը 1993-ի օգոստոսի 26-ին:

1993-ի օգոստոսի 26-ն էր: Մարտակերտն արդեն ազատագրվել էր, մարտերը դեռ շարունակվում էին: Կողմիս արկ պայթեց, մարմինս ասես բզկտվեց, բայց չհասկացա ինչ է կատարվում: Դրանից հետո վեց ամիս կուրացել եմ: 12 վիրահատության արդյունքում մարմնիս 24 բեկոր հեռացրեցին, բայց էլի ժապեց էր: Ընդհանուր թվով՝ 27 վիրահատություն եմ տարել, դեռ էլի ունեմ...

Այդ ժամանակ ինձ տեղափոխեցին Երեւան բուժվելու: Մտածում էի հենց ոտքի կանգնեմ, հետ եմ գնալու, բայց հրադարար եղավ: Հրադարարի լուրը լսելով եւ ուրախացա, եւ տխրեցի՝ մենք դեռ անելիք ունեինք...

Պատերազմից հետո երկար տարիներ աշխատել եմ ՀՀ Զինված ուժերում, բայց արդեն մի քանի տարի է դուրս եմ եկել հավակարգից:

Պատերազմի ժամանակ միշտ նույն երազն էի տեսնում՝ գնում եմ բաղնիք, լողանում, հագնում մաքուր գիշերազգեստ, հետո ինձ տաք հաց են տալիս, հոտ եմ քաշում ու սկսում ուտել այն: Այդ երազն այնքան իրական էր թվում, որ անգամ հացի հոտն էի գգում: Երբ պատերազմից հետո եկա տուն, տաք հաց վերցրեցի ու ահագին ժամանակ հոտ էի քաշում: Ասում էի՝ սա երազումս տեսած հացի հոտն է. նույն հոտն էի գգում:

Պատերազմը խլեց առողջությունս, սիրունությունս, երիտասարդությունս, երջանկությունս: Տվեց միայն հայատությունս, լավ ընկերներ, նոր արժեքներ, որոնք, միգուցե, մարտի դաշտ գնալուց առաջ չէի գնահատում, բայց հիմա հստակ գիտեմ՝ կան բաներ, որոնք ոչ կարող ես գնել, ոչ էլ վաճառել, եւ, որ ամենակարեւորն է, ոչ ոք չի կարող դրանք խլել քեզանից:

Պատերազմից հետո ահագին ժամանակ էր պետք սովորական կյանք վերադառնալու համար: Մինչեւ հիմա էլ դուրս չեմ գալիս կովի դաշտից: Բաներ կան, որ մինչեւ հիմա մեջս են ու դժվար էլ երբեք դուրս գան:

Հիմա ամուսնացած եմ, շատ լավ ամուսին ունեմ, ունեմ այն ամենն, ինչ պետք է կնոջը երջանիկ լինելու համար, լավ ընկերներ ունեմ, որպես հայր՝ Արկադի Բվանյանն է կողքիս կանգնած, բայց այնտեղ՝ առաջին գծում, ես թողեցի իմ հոգին. իմ հոգին չի հանգստանում ու դրա հետ ոչինչ չես կարող անել:

Մենք հաղթեցինք պատերազմում, բայց տվեցինք մեր հոգու խաղաղությունը, երջանկությունը, մեր առողջությունը, մեր ծիծաղը, մենք ամեն ինչ տվեցինք մատաղ մեր հայրենիքին, որն այդպես էլ մեզ չընդունեց որպես հերոս: Ես մեղալներով չեմ հերոս ճանաչում: Հիշտ է, ինձ հարգում էին, Մելքոն Օհանյանն էլ իմ մարտական ընկերն է, ինձ միշտ հիշում է, խոսում ինձ հետ, բայց միայն իրենով չի որոշվում. բա մյուսները, բա մեր մյուս կոչված տղաները...

Ինչո՞ւ ստեղծվեց Եռաբլուրը, որ մենք չպետք է երջանիկ ապրենք. որոշ մարդիկ իրենց առողջությունը տվեցին, որոշ մարդիկ իրենց հոգեկան ապրումները, որոշ մարդիկ՝ իրենց կյանքը. իսկ փոխարեն նր, հետդարձը

ո՞րն է: Ինչու՞ մեր կոված տղաները պետք է այսօր հանգիստ ու գնահատված չապրեին: Պատերազմի երկրորդ կարգի հաշմանդամ անգամ բժշկական ծառայության 50 տոկոս գեղջ չունի: Ահա այն, ինչ ես վաստակել եմ համազգեստս:

Մեկ-մեկ քայլում եմ փողոցով ու ջահելների դեմքին ժպիտ չեմ տեսնում: Ես ջահելներին ուրախ եմ ուզում տեսնել, մարդկանց դեմքին ժպիտ ու խաղաղություն եմ ուզում տեսնել: Մենք դրա համար ենք մեր կյանքը դրել: Յուրաքանչյուր մարդ իրեն մարդ կզգա, լավ ու գնահատված կզգա, երբ իր արածի արդյունքը տեսնի:

Ինձ համար ցավալի է իմ ազգի վիճակը. ես նրա համար չեմ կովել, որ իմ ժողովուրդն այսօր սոված լինի, վարկերի տոկոսների տակ ճռռա, ես նրա համար չեմ կես մարդ դարձել, որ իմ ժողովուրդը ստիպված լքի իր երկիրը: Մարտի դաշտում մենք միանգամայն այլ ապագա էինք տեսնում մեր երկրի համար:



Անահիտ Մարտիրոսյանը Արցախում 2016թ. ապրիլին

Կնոջ ու տղամարդու պատերազմի միջև տարբերություն չկա, առյուծի էգն ու որձը չկա: Ով առաջին գիծ է գնացել, ուրե՞մա իրեն չի տարբերել տղամարդուց: Մի անգամ մարտի դաշտում Յվետանա Պասկալեային տեսա: Նա այնքան գեղեցիկ էր, խնամված, վրայից օձանելիքի անուշ բույր էր տարածվում: Էդ ժամանակ զգացի, որ մոռացել եմ, թե ինչ բան է կին լինելը:

28 հոգուց բաղկացած ջոկատ էր, միակ կինը ես, բայց տղաների հետ երբեք չեմ խոսել: Նրանք անգամ իմ ներկայությամբ չէին ծխում: Մենք լավ ընկերներ էինք: Հրամանատար լինելը շատ բարդ է թե՛, կնոջ թե՛ տղամարդու համար: Յուրաքանչյուր զինվոր մտածում է իր մասին, իսկ հրամանատարը բոլորի. յուրաքանչյուրի ցավով ապրում, ամեն գոհի հետ մտնում, մի մասնիկ տալիս իրենից, հետո էլի պայքարի ուժ հավաքում, որովհետև այնտեղ միակ նպատակը հաղթելն է:

Այնքան հուշեր կան էդ օրերից: Եղել է, որ «կասկան» քանդել ու մեջը կարտոֆիլ ենք կիսել, մի անգամ էլ ապուր ենք եփել. տղաներն ասում էին՝ «կյանքում եղպես համով ապուր չենք կերել»: Այն ճանապարհը, որով պետք է գնայինք, իմ ձին է անցել ու ականի վրա մնացել՝ փրկելով իմ եւ ընկերներիս կյանքը...

Ժամանակին, երբ հոգիս խաղաղություն էր տեսնում, Արցախ էի գնում: Այնտեղ ինձ լավ եմ զգում՝ իմ ընկերուհիների հետ, իմ հաղթած հողում. բաներ կան, որ խոսքով չես կարող բացատրել, մեջդ են ու մեջիցդ չեն կարող դուրս գալ, դրա համար էլ շատ ժամանակ լռում եմ: Հիմա առողջությունս չի ներում, որ հաճախ գնամ:

2016 թ. ապրիլյան պատերազմին ես՝ Արկադի Տեր-Թադևոսյանի, հրամանատարությամբ Արցախում էի առաջնագծում: Պատերազմը չի ավարտվել, անկախ նրանից՝ համակարգում եմ, թե չէ՝ ես հավերժ մարտիկ եմ: Որքան պետք լինի, պիտի կանգնեմ մեր զինվորի կողքին ու լուռ անեմ իմ գործը:

Եթե կուզես, մի անգամ կգնանք Ղարաբաղ, որտեղ միասին մեղ անցած ճանապարհներով կըրջենք: Կգա ս, հաստա տ (դրական պատասխան ստանալուց հետո սկսում է թերթել լուսանկարներն ու խոստանում, որ ինձ համար նոր Արցախ է բացահայտելու հեղ.):

Ասերյան Ստալինան (ցույց է տալիս լուսանկարում պատկերված կովող կանանցից մեկին-հեղ.) ու մեր ջոկատի տղաներից մեկը նշանված էին: Մարտերից մեկի ժամանակ այդ տղան զոհվեց, գնացինք Չղրանի հոսպիտալ, մտածում էինք թե ո՞վ է Ստալինային բոթը հայտնելու, բայց իմացանք, որ նույն օրը, նույն ժամին նա էլ է զոհվել: Պատերազմը շատ վատ բան է...



Անահիտ Մարտիրոսյանը ընկերուհու՝ Սվետլանայի հետ

Մարտական ընկերներս՝ Վալենտինան եւ Սվետլանան, ում Մեռ էինք ասում, վերջերս էին Արցախից Երեւան եկել: Հաճախ ենք ընկերներով հավաքվում: Մեր գրուցներում անցյալն ու ներկան խառնվում են, հետո անցյալը հաղթում է. ավելի շատ հիշում ենք մեր ընկերներին ու նրանց հետ ապրած օրերը:

Անցյալը չես կարող մոռանալ, անցյալը մոռացողն ապագա չունի: Երբ նոր էի վերադարձել Երեւան, երկար ժամանակ անբնություն ունեի, իսկ երբ քնում էի, պատերազմը երազի տեսքով զոհված ընկերներից հետ, ինձ հյուր էր գալիս: Կարծում էի՝ հոգեկան աշխարհի խանգարվում է, բայց կանգնում էի հայելու առաջ ու ասում իրավունք չունես, դու ուժեղ ես:

Երկու տղաներս էլ զինվորական են դարձել: Միշտ ասում էին՝ չխառնվես, որտեղ ուղարկեն, այնտեղ էլ ծառայելու ենք: Երկուսն էլ առաջին գիծ են գնացել: Մեկը կա-



Անահիտ Մարտիրոսյանը թոռնիկի հետ

պիտան է, մյուսը՝ ավագ լեյտենանտ: Փոքրս, որ ավագ լեյտենանտ է, հիմա ընտանիքի հետ Օսնկում է ապրում: Դստերն իմ անունով է կոչել (ժպտում է ու ցույց տալիս փոքրիկ Անահիտի լուսանկարը-հեղինակ): Մեծս կապիտան է, չորս տարի դիրք է պահել՝ ինձնից ոչ պակաս: «Փափուկ» տեղ էին ուղարկել, բայց դիմում էր գրել ու գնացել առաջին գիծ: Անցած տարի մտերիմ ընկերոջը հակառակորդի դիպուկահարը խիլ էր, տղայիս ձեռքերի վրա մահացել: Զգում էի էլ ապրումներից շատ վատ վիճակում էր, չթողեցի այնտեղ մնա: Մեծս էլ վերջերս է դուստր ունեցել, հիմա էլ Անգելինային խնամելով եմ զբաղված:

Պատերազմից հետո՝ 1994-ին ծնվեց աղջիկս, այս տարի կավարտի Գեղարվեստի ակադեմիայի գրաֆիկայի ֆակուլտետը: Նա եղավ իմ փրկությունը, հրեշտակի պես եկավ ու փոխեց իմ կյանքը: Եթե աղջիկս չլիներ, ես կխելագարվեի: Այն, ինչ որպես կին հիմա տեսնում եք իմ մեջ՝ ամուսնուս ու աղջկաս շնորհիվ է:

Ամուսինս մեր կոված տղաներից է: Երբ մեր մարտական ընկերները եկել էին մեզ շնորհավորելու, ինձ շնորհավորում էին, իրեն ցավակցում (կատակում է-հեղ.): Շատ բաներ հենց նրանց շնորհիվ մոռացության է տրվել, բայց մեկ է էլ մոռացությունն էլ հարաբերական է. ոչ մեկը չի կարող մոռանալ այն, ինչ ապրել ու տեսել է:

Եթե կյանքս նորից ապրելու հնարավորություն ունենայի, կապրեի այնպես, ինչպես ապրել եմ. ես ոչնչի համար չեմ ափսոսում, երբեք էլ չեմ ափսոսել, միշտ արել եմ այն, ինչ պետք է անել:

Առաջին գծում լիաթոք ապրումներ եմ ունեցել ու մեկ-մեկ կարոտում եմ էլ օրերը: Հիշտ է, դաժան է հնչում՝ ոնց կարող է մարդը պատերազմի օրերը կարոտել, բայց ես կարոտում եմ, կարոտում եմ էն պահը, երբ հող ենք ազատագրել, ջոկատով կանգնել էլ հողի վրա, նրա հետ միասին ուրախացել ու լացել: Պարզապես հիմա էլ պետք է ամեն գնով պահենք էլ հողը:

Միդանուշ ԵՂԻԱՆՈՅԱՆ

Լուսակալները՝ Մարիամ Լուրցյանի եւ Անահիտ Մարտիրոսյանի արխիվից

Ֆելիքս ԳՉՈՂՅԱՆ. «Ես հերոսի համար չեմ կռվել, ինձ իմ հայ ազգն է պետք, դրա համար էլ ինձ ասում են ժողովրդական գեներալ»

Գեներալ-մայոր Ռաֆայել (Ֆելիքս) Գզողյանին հանդիպում ենք նրա ծառայողական բնակարանում: Զրույցը սկսելուց առաջ 74-ամյա գինվորականը ծխախոտի գլանակ է վառում: Մեր խոսակցությանը հետեւում է կինը տիկին Սուսանը:

Մինչև Արցախյան շարժումը Ֆելիքս Գզողյանը ծառայում էր Անդրկովկասյան ռազմական օկրուգում Կրասնոսնի Ախալ-ցիխե քաղաքում: Հիշում է, որ երբ Շարժումն սկսվեց, որոշեց գորացրվել ու վերադառնալ Հայաստան, չնայած մեծ պաշտոններ էին առաջարկում խորհրդային բանակում: Ընտանիքն այդ ժամանակ Բաքվում էր, 1989-ին տեղափոխեց Հայաստան ու մտավ Շարժման մեջ:



1990-ին Իջեւանում էր Շամշադինից մինչև Նոյեմբերյան ձգվող ճակատի շտաբի պետն էր, իսկ երբ նույն տարում Երեւանում ձեւավորվեց Հատուկ գունդը, դարձավ դրա շտաբի պետ: 1991-ին Հայաստանի նախարարների խորհրդին առնջեր ձեւավորվեց պաշտպանության կոմիտե, որի կազմում Ֆ. Գզողյանը բաժնի պետ էր:

«Երբ աղբյուրները 1991-ի հունիսին գրավեցին Շահումյանի շրջանի Էրբեջ, Բուզլուխ, Մանաշիդ գյուղերը, ցանկություն հայտնեցի գնալ Շահումյան: Ինձ չմերժեցին: Շահեն Մեղրյանն էր շրջանի լիդերը: Ես շտաբի պետն էի, նա էլ հրամանատարը: Մենք շատ լավ համագործակցում էինք: Ընտանիքներով մտերմացանք», – պատմում է Ֆելիքս Գզողյանը: Մեպտեմբերին հայկական ուժերին հաջողվեց ազատագրել գրավված երեք բնակավայրերը, սակայն այդ ընթացքում էլ Գզողյանը վիրավորվեց ձորից վազել էր, ցատկել, վայր ընկել ու լուրջ վնասվածքներ ստացավ: «Գողդես ջարդեցի, 6 ամիս կորստով էի ման գալիս, բայց չդիմացա հիվանդանոցում, նորից գնացի Շահումյան, էստեղից որ եկա, 1992-ի հունվարին ասացին, որ պիտի գնամ Դարաբադ», – գեներալն այսօրվա պես է հիշում 25 տարի առաջ տեղի ունեցածը: Հունվարի 28-ին Գուրգեն Դալիբաջյանի հետ մեկնել է Արցախ, որտեղ էլ նշանակվել է տեղի ինքնապաշտպանական ուժերի (ԻՊՈ) շտաբի պետ: Պատմում է, որ չնայած փաստացի Արկադի Տեր-Թադեւսյանը Կոմանդոսը, ԻՊՈ-ն հրամանատարն էր, ինքն էլ շտաբի պետը հունվարի 29-ից, այդ պաշտոններում հաստատվել է միայն մարտի 26-ին, երբ ԼՂՀ նախարարների խորհրդին առնջեր ստեղծվել է պաշտպանության կոմիտե (ինքնապաշտպանության կոմիտե, ԻՊԿ) Մերձ Սարգսյանի ղեկավարությամբ:



Ստեփանակերտը տարբեր կողմերից պարբերական արկակոծության տակ էր: Շուշիի օպերացիայից առաջ անհրաժեշտ էր վերացնել այդ կրակակետերը: Փետրվարի սկզբին լեզվեց Մալիբեկյուն, ինչը հնարավորություն տվեց բացել ճանապարհը դեպի Մարտունի, ամսի 26-ին էլ լեզվեց հզոր ռազմակետ դարձած Խոջալուն ազատագրվեց օդանավակայանը, բացվեց Ստեփանակերտ-Ասկերան մայրուղին: Կիչան-Սրիսավենդ հատվածի վերահսկմամբ էլ Արցախի մայրաքաղաքը կապ հաստատեց Մարտակերտի շրջանի հետ:

«Երբ ստեղծվեց պաշտպանության կոմիտեն, մենք սկսեցինք նախապատրաստական աշխատանքներ տանել Շուշիի ազատագրման ուղղությամբ, – պատմում է Ֆ. Գզողյանը, – կարողացանք ջոկատներին փաձուլել, բռնուցք սարքել, թե չէ ով գալիս էր, ասում էր ես սպարապետ եմ, գորավար եմ: Լեզու գտնելը դժվար էր, բայց կարողացանք բանակին նմանվող կառույցներ ստեղծել: Սկսեցինք պաշարներ ստեղծել գեղ-գինամթերքի, սննդի, վառելիքաքսութային նյութերի: Ու սկսեցինք հետախուզություն անել: Առանց դրա չես կարող գործողություն իրականացնել, մոտ մի ամիս դրանով էինք զբաղվում: Եկանք էն եզրակացության, որ կարելի է Շուշիի օպերացիան իրականացնել: Առաջին անգամ մարտական հրաման գրվեց, քարտեզի վրա գծագրվեց»:

Դիտարկվում, թե տարբեր առիթներով խոսվել է այն մասին, որ գործողությունն ապրիլին պիտի իրականացվեր, սակայն եղանակը խանգարել է, գեներալ Գզողյանը պատասխանում է. «Չեմ ուզում մանրամասնել մեր գաղտնիքը... Կիչան-Սրիսավենդից հետո, երբ Վազգենը եկավ Դարաբադ, հարցրինք, թե երբ ես ամուսնանալու: Ասաց երբ Շուշին գրավվեք, կամուսնանամ: Դրա համար անունը դրինք «Հարսանիք լեռներում»»:

Գեներալը կնոջը խնդրում է բերել Շուշիի ազատագրման 2003 մասնակիցների ցուցակը, որոնցից 47-ը գոհվել է, 7-ը անհետ կորել: Գործողությունը 4 ուղղություն ուներ. հյուսիսային հրամանատար Վալերի Զիթչյան, արեւելյան Արկադի (Ագո) Կարապետյան, հարավային Սամվել Բաբայան, Ջանհասան-Քոսալար Մեյրան Օհանյան:

«Բոլորն էլ իրենց մարտական առաջադրանքը կատարել են, – շեշտում է շտաբի նախկին պետը, – բոլորի առաջադրանքը գրված է մարտական հրամանի մեջ»:

Շուշիի ուղղությամբ գրոհի հրետանային նախապատրաստությունը սկսվել է մայիսի 8-ի լույս գիշերը 2:30-ին: Մայիսի 8-ին, երբ հակառակորդը խցել է քաղաքի ուղղությամբ բարձրացող հայկական տանկը, Ֆ. Գզողյանը թողել է հրամանատարական կետն ու գնացել այդ ուղղությամբ: Հրաման է տրվել որոշ ժամանակ հետ քաշվել, սակայն հետո հարձակումը վերսկսվել է:



«Որտեղ վտանգավոր ու բարդ իրավիճակ էր ստեղծվում, մենք այնտեղ միշտ ուղարկում էինք Ֆելիքս Գզողյանին: Նույնպես եւ Շուշիի գործողության ժամանակ. երբ մեր տանկը խիցեցին, եւ մեր հարձակումը մի կարճ ժամանակով դադարեցրինք, Գզողյանին ուղարկեցինք, եւ նա բոլոր հարցերը կարգավորեց, եւ դեպի Շուշի հետագա հարձակումը շարունակվեց»:

Գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադեւսյան (Կոմանդոս)

«Մայիսի 9-ի առավոտյան ժամը 6-ին քայլում էինք Շուշիում, – ժպիտով հիշում է հրամանատարը, – թեք էիր տալիս դվի-ծոկները տաք էինք, ձեռք տաք էր... Մենք ճանապարհ էինք թողել, որ հակառակորդը ճանապարհով հեռանար Լաչին, հետո Դուբայթլու»:

Հարցնում եմ, թե ինչ էր զգում Շուշի մտնելուց հետո: Մի տեսակ հուզվում է, դեմքն ավելի է կարմրում. «Քո հողն ես ազապագրել... Ես ինձ հպարտ էի զգում, ինչու պիտի մեր հողը թողնեինք նրանց: Ախր պետք է էլ մոմենտին կողքիս լինեիր, որ իմանայիր: Երբ արցունքներ եմ գալիս, ո՞նց կլինես... Ես բոլորին եմ ուզում նշել: Բոլորն իրենց դերը կատարել են, Հայաստանից եկած ջոկատներն էլ իրենց դերը կատարեցին: Էդ մարդկանց մենք չպիտի մոռանանք: Հո մենակ Շուշիի ազատագրմանը չեն մասնակցել իրենք»:

Գործողության ժամանակ հայկական ուժերի գնահատականը հրամանատարն

այսպես է տալիս. «Կոնֆուցիոսի հարցնում են, թե հաղթանակի համար ինչ է պետք, ասում է՝ հաց, զենք, ոգի, հարցնում են իսկ եթե երկուսը թողնեն նք, ասում է՝ զենք, ոգի, իսկ եթե մեկը թողնեն նք, ասում է՝ ոգի: Մեր զինվորի ոգին է եղել էականը: Եթե մենք չվերցնեինք Շուշին, չգիտեմ, թե ոնց պիտի լիներ վերջը»:

Ֆելիքս Գոդոյանն Արցախի ԻՊՈւ շտաբի պետն էր մինչև 1992-ի հոկտեմբեր: Այդ տարվա առաջինը, երբ աղբյուրներից հանում էր մեծաքանակ տեխնիկայի աջակցությունը սկսել էր լայնածավալ գործը Շահումյանի ու Մարտակերտի շրջանների ուղղությամբ եւ զավթել առաջինն ու երկրորդի մեծ մասը, Ֆ. Գոդոյանը հուլիսին վիրավորվել է:

«Երբ Չլդրանում վիրավորվեցի, ոտքս պիտի կտրեին, Արտո Սահակյանն իր կաբինետում վիրահատեց, բայց ոտքս չկտրեց... Վազգենն (Վ. Սարգսյանը- հեղ.) էկավ, կնոջս թեմն ընկավ, ասեց՝ Սուսան քույրիկ, գիտե՞ս, քո ամուսինը հերոսն աս, ազգի հերոսն աս...», – պատմում է գրուցակիցս, ու այդ պահին միջամտում է կինը դառնացած հեղինակով. «Ղրա համար էլ 25 տարի անցել է, հերոս են տվել քեզ»: Գեներալի դեմքը շիկում է, սուր հայացքով սաստում է կնոջն ու ձեռքը սեղանին խփելով գոռում. «Սուսան, հերիք է, ես հերոսի համար չեմ կռվել, ինձ ոչ պաշտոն է պետք, ոչ էլ բան, ինձ իմ հայ ազգն է պետք, դրա համար էլ ինձ ասում են ժողովրդական գեներալ»: Շիկացած մթնոլորտը պարպվում է, իսկ մենք ժպտում ենք:

«Եզակի հրամանատարներից է, որ անընդհատ առաջնային գծում է եղել: Անընդհատ եկել է, մարտը ղեկավարել: Եվ շտաբում է գծել, պլաններ մշակել, բայց նաև անմիջականորեն խրամատում զինվորի հետ կռվել է թշնամու դեմ:

Շուշիի օպերացիայի նախապատրաստական փուլում գերագույն ներդրումը Ֆելյուինն է:

Ֆելյուն ամեն ինչի տիրապետում էր: Մինչև չճշտեր, մարդ չէր ուղարկի մարտի դաշտ, որ չգոհվեն:

Իգուր չէ, որ նրան սիրով անվանում են ժողովրդական գեներալ»:

Գնդապետ Սուրեն Սարգսյան

«1992-ի հոկտեմբերի 15-ին Վազգեն Սարգսյանը Ղարաբաղից կանչեց Երեւան, թե արի մի 3, օրով հանգստացի: Իրիկունը մտա մտոր բա դու քո գործողությունները շատ լավ կատարել են, պիտի գնաս Լաչին, մենակ դու կարաս գլուխ հանես: Ասեց դե, էս վաղն էլ հրաժարական եմ տալու, ասի դե, էդ դեպքում ես էլ գնալու եմ Արցախը հանձնեմ: Ասեց՝ էդպես է պետք, բայց ես միշտ լինելու եմ Մյունիքում: Ամսի 17-ին գնացի Լաչին, հարավարեւելյան ճակատի Կապանից մինչև Լաչին ձգվող գծի հրամանատարն էի, – վերհիշում է Ֆ. Գոդոյանը, – ամենակարևորը Լաչինի միջանցքը պահելն էր: Հայկականորեն իր դիրքերից անընդհատ խփում էր Լաչինի վրա: Երբ ես եկա, 25 կմ էր միջանցքի լայնքը: Կարողացանք պահպանել այն, մինչև 1993-ի մարտի 11-ը մնացի այդտեղ»:

Հարավարեւելյան ճակատից հրամանատարը տեղափոխվել է Երեւան, նշանակվել Սովետաշենում տեղակայված առաջին բրիգադի հրամանատար: Բրիգադի պատասխանատվության ներքո էր սահմանագիծը Երասխայանից մինչև Ջերմուկ:

Գեներալի կենսագրության մեջ առանձին էջ է Օմարի գործողությունը 1994-ի ձմռանը:



Հակառակորդը կարողացել էր հետ վերցնել այս ուղղությամբ նախկինում կորցրած տարածքների մի մասը: Չնայած զանգե-կանչել էին Վարդենիս, չէր համաձայնել, ասում է որոշ հարցեր կային, նեղացած էր, բայց հետո համոզել են:

«Հունվարի 28-ի իրիկունը Վարդենիսում էի, էստեղից գնացի Դեմիրճիդում ու փոխարինեցի Միխայիլ Հարությունյանին... Ես գրոհի ձախ թելից էի, Յուրի Խաչատուրովը աջ: Գլխավոր հրամանատարը գեներալ Հրաչ Անդրեասյանն էր: Ամսի 29-ին սկսեցինք գործողությունն ու հասանք մինչև Մեյլիյար: Փետրվարի 17-ին սկսեցինք Օմարի հարձակումը, ամսի 18-ի առավոտվա 5:17-ին ես ու Արամ (հիմա Սեյրան Սարոյանի անվան գյուղում է) կանգնած էինք Օմարի լեռնանցքում: Քիչ էր ժամում մինչև Խանլար, բայց... Էդպես էլ վերջացավ իմ էպոպեան», – ասում է հրամանատարը:

1994-ի մայիսի 12-ի զինադադարի մասին լսել է Երեւանում, որտեղ նախարարության գործերի ծառայության վարչության պետն էր: Հարցնում են, թե ինչպես ընդունեց լուրը, արդյոք ինչ-որ բանի թերի, կիսատ լինելու զգացողություն չունե՞ր, ասում է. «Շատ լավ ընդունեցի լուրը: Ժողովուրդն արդեն հոգնել էր, մեզ էլ հանգիստ էր պետք բանակը կառուցելու համար: Սկսեցինք կառուցվածքային փոփոխությունները, բրիգադներ, գնդեր ստեղծեցինք... Ես մինչև իմ աչքերով թույլը չկարդամ, չեմ հավատա, որ չեն թողել առաջ գնալ: Հա, վերցնեինք Միլբաշիքը, Կիրովաբադը, բայց ո՞նց էինք պահելու, Էդքան զենք ու մարդ ունե՞ին: Եթե չլինե՞ր զինադադարը, մենք չէինք կարող բանակ ստեղծել, ով ոնց ուզում է թող գնա՛հատի, բայց զինադադարն օգնեց հասնել սրան: Ապրիլյան գործողությունները ցույց տվին, որ մեր բանակն ուժեղ է, որ մեր զինվորի ոգին մեծ է...»:

Թոշակի անցած գեներալն այժմ էլ բանակի կողքին է, աշխատում է պաշտպանության նախարարին առընթեր բարձրագույն սպայական հանձնաժողովում: Ասում է, որ 25 տարին շատ քիչ է բանակի կայացման համար, սակայն առաջընթացն անցած տարիների համեմատ ակնհայտ է բոլոր նրանց համար, ովքեր ծառայել են բանակում, եղել են հատկապես առաջնագծում. «Մեր հանձնաժողովը ստուգում են ուսումնասիրում է, առաջարկություններ է անում նախարարին: Այո, կան թերություններ, բացթողումներ, բայց օրեցօր, ամսեամս, տարեցտարի վերացվում են դրանք»:

Ջրույցի վերջում գեներալ Գոդոյանն իր առանձին շնորհավորանքն է հղում բոլոր նրանց, ում շնորհիվ մայիսի 9-ը դարձել է տոն. «Ես ուզում եմ բոլորին շնորհավորեմ, մասնավորապես Հայրենական պատերազմի վետերաններին, իրենք են մեզ ապրել տվել, նրանց ցանկանում եմ երկար տարիների կյանք, առողջություն, հաջողություն: Մայիսի 9-ի առիթով շնորհավորում եմ բոլոր ազա-



տամարտիկներին, ովքեր մասնակցել են Շուշիի, Արցախի ազատագրմանը, ցանկանում եմ առողջություն, հաջողություն, երկար տարիների կյանք, եւ թող մեր հայրենիքը, մեր Հայաստանը, Արցախը միշտ կապույտ երկնքի տակ լինեն»:

Ռաֆայել (Ֆելիքս) Գոդոյանը ծնվել է 1943 թ. հունվարի 15-ին Շամլուղում: 1963-ին ավարտել է Տաշքենդի տանկային բարձրագույն ուսումնարանը, 1963-1988 թթ. ծառայել ԽՍՀՄ զինված ուժերի Անդրկովկասյան ռազմական օկրուգի տարբեր զորամասերում իբրեւ տանկային դասակի, վաշտի, գումարտակի, զորամասի հրամանատար, ուսումնական կենտրոնի պետ: 1988-ին զորացրվել է խորհրդային բանակից ու փոխգնդապետի կոչումով տեղափոխվել Հայաստան: Ընդգրկվել է «Երկրապահ» կամավորական ջոկատում եւ մեկնել սահմանամերձ գոտի՝ որպես Իջեւանի երկրապահների շտաբի պետ: 1990-ին նշանակվել է Երեւանում կազմավորված Հատուկ գնդի հրամանատարի տեղակալ-շտաբի պետ: Հետագայում տեղափոխվել է Շահումյան Շահեն Մեղրյանի հետ Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի պաշտպանական գործողությունների համակարգման համար: Դեկտեմբերի էրբեք, Բուզլուխ, Սանաշիղ գյուղերի ազատագրումը: 1991 թ. Գոդոյանն իր ներդրումն է ունեցել ՀՀ պաշտպանության կոմիտեի ստեղծման գործում, այնուհետեւ տեղափոխվել է Արցախ: 1992 թ. սկզբին նշանակվել է ԼՂ ինքնապաշտպանական ուժերի (ԻՊՈւ) շտաբի պետ: 1992 թ. հոկտեմբերի 17-ից մինչև 1993 թ. մարտի 11-ը եղել է մարտագծի հարավարեւելյան ուղղության հրամանատար: 1995-ին նշանակվել է Տավուշում տեղակայված զորամասի հրամանատար, 1997-ին մեկ այլ զորամասի հրամանատար, այնուհետեւ տեղափոխվել է Երեւան ՀՀ ԶՈւ գլխավոր շտաբ որպես հատուկ գործերով շտաբի պետի տեղակալ: 1998 թ. նշանակվել է նորաստեղծ 5-րդ բանակային զորամիավորման շտաբի պետ, 2000-2006 թթ. ՀՀ ԶՈւ ԳԾ պետի տեղակալն էր: 2002 թ. ստացել է գեներալ-մայորի կոչում: Այժմ աշխատում է ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր բարձրագույն սպայակազմի հանձնաժողովում:

Պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի եւ ՀՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշաններով ու «Շուշիի ազատագրման համար» մեդալով, ինչպես նաև խորհրդային ու հայկական բանակի բազմաթիվ պետական պարգևներով:

Վահե ՍԱՐԴՈՒՆՅԱՆ

Լուսանկարները՝ Յակոբ Պողոսյանի, Ռ. Գոդոյանի անձնական արխիվից

«...Մենք հզոր ազգ ենք, անպարտելի, եթե ազատվենք ստրկամտություն, ուրիշին պատվիմելու մահացու իհնավանդությունից: Այն ազգը, որ չի ձգտում անկախության, դատապարտված է վերացման»:

Ռաֆայել ԻՇԽԱՆՅԱՆ

Բուլղարիայի նախագահ. Կարեն ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ստեղծած համալիրը մեր ժողովրդի հպարտությունն է



Հունիսի 26-ին բուլղարական Պլիսկա քաղաքում «Կիրիլյան տառերի նստավայր» պատմամշակութային համալիրում տեղի է ունեցել բուլղարացի գրող՝ հեղափոխական Զախարի Ստոյանովի կիսանդրու բացումը: Քանդակի բացման արարողությունը ներկաներին ողջունել է Բուլղարիայի նախագահ Ռումեն Ռադևը:



Քանդակի հեղինակն է բուլղարացի պրոֆեսոր Իվան Սլավովը, իսկ հովանավորը՝ Պեկա Գանչևան: Սա թվով 47-րդ կիսանդրին է, որ տեղադրվել է այդ համալիրում, որտեղ տեղ են գտել 22 ազգերի հայտնի այն դեմքերի կիսանդրիները, որոնք երբևէ ստեղծագործել են կիրիլիցայով: Հիշեցնենք, որ համալիրում են կանգնեցված բուլղարահայ գրող և հրապարակախոս, Սոֆիայի համալսարանի հայագիտության ամբիոնի հիմնադիր Հակոբ Մելքոնյանի և արցախցի գրող, արձակագիր Լեոնիդ Հուրունցի (1913-1982) կիսանդրիները:



Նշենք, որ համալիրն աշխարհում առաջինը և միակն է, որը նվիրված է կիրիլիցային և այս ամենի հեղինակը մեր հայրենակից,

գործարար Կարեն Ալեքսանյանն է, որը ստեղծել է Կիրիլյան տառերի պուրակ, թանգարան և հյուրանոցային համալիր, որն իր պատմական ու ժամանակակից նշանակությամբ բացառիկ է ոչ միայն Բուլղարիայի, այլև ողջ սլավոնական աշխարհի համար:

Այդ մասին է խոսել նաև Բուլղարիայի նախագահն իր ողջունի խոսքում:



Դիմելով Բուլղարիայում և արտերկրում ապրող բուլղարացիներին, նախագահ Ռումեն ասել է, որ այդ սուրբ տեղում՝ Բուլղարիայի հնագույն մայրաքաղաք Պլիսկայում վերջին տարիներին ստեղծվել է ամբողջ աշխարհում նմանը չունեցող համալիր: Նրա ասելով, «այս սրբավայրը ստիպում է մեզ հպարտանալ, որ մենք բուլղարացիներ ենք, ինչն անվիճելիորեն ևս մեկ անգամ ցույց է տալիս մեր հոգևոր ներդրումը համաշխարհային քաղաքակրթության մեջ»:



Նա հատկանշական է համարում, որ համալիրի հեղինակը ոչ թե պետությունն է, կամ որևէ հարուստ բուլղարացի, այլ հայազգի Կարեն Ալեքսանյանը, որը Բուլղարիան ընդունել է ոչ թե փաստաթղթերով, այլ իբրև հոգևոր հայրենիք:

«Նրա մտքի, ոգեշնչման, ուժի, միջոցների ու էներգիայի շնորհիվ է, որ այս ավերակ դարձել է իրականություն: Այսօր մենք մեր զավակները, արտերկրից ժամանած մեր հյուրերը, մեր թոռները և հաջորդ բոլոր սերունդները, կարող են այստեղ զգալ բուլղարական ոգու ուժը», – ասել է Ռումեն Ռադևը:

Նա նշել է, որ բուլղար և հայ ժողովուրդներին կապում է պատմականորեն միասնական ճակատագիրը, մշակութային և հոգևոր մտերմությունը:

«Այն, ինչ արել է պարոն Ալեքսանյանը, խորհրդանշում է մեր երկու ժողովուրդներ-



րի բարեկամությունը, ավելին, հայ քանդակագործների կողմից հայկական քարից փորագրված մեր բուլղարական տառերը Բուլղարիա են բերվել Հայաստանից, դրանք ընդմիջտ համախմբում են մեր երկու բարեկամ ժողովուրդներին: Այնպես որ, պարոն Ալեքսանյան, ընդունեք իմ և բոլոր բուլղարացիների խորին երախտագիտությունը և հարգանքը» – ասել է Բուլղարիայի նախագահը թանգարանային համալիրին ծանոթանալուց հետո:

Ինչպես արդեն «ՕՐԵՐ»-ում գրել ենք, 681 թվականին Պլիսկան դարձել է Բուլղարիայի առաջին մայրաքաղաքը, որը հիմնել է խան Ասպարուխը: Այսօր այդ գրեթե մոռացված քաղաքին նոր շունչ է տվել մեր հայրենակից, 1993 թվականից Բուլղարիայում ապրող գործարար Կարեն Ալեքսանյանը, ում ջանքերով 2015 թվականի մայիսի 2-ին տեղի է ունեցել Բուլղարիայի պատմությանն ու քրիստոնեությանը, կիրիլիցային նվիրված աշխարհում առաջին թանգարանային համալիրի բացումը, որին կից գործում է նաև «Հին Պլիսկա» հյուրանոցային համալիրը: Թանգարանի տարածքում գործում են Բուլղարիայի պատմության կարեւոր թագավորների սիմվոլից պատրաստված յոթ արձանիկները, տարբեր պատմական շրջաններին նվիրված գեղանկարչական աշխատանքների սրահը, ինչպես նաև կիրիլիցային նվիրված տառ-խաչքարերի բացօթյա ցուցահանդես, որի հեղինակը հայ քանդակագործ Ռումեն Նալբանդյանն է: Այստեղ է տեղադրված նաև նրա հեղինակած հայկական խաչքարը:

Մեզ հետ զույգում Կարեն Ալեքսանյանն ասաց, որ հայկական խաչքարերի ոճով քանդակված կիրիլյան այբուբենի տառերն այցելուներին մեկ անգամ ևս հիշեցնում են, որ Հայաստանը առաջինը քրիստոնեությունը պետական կրոն հռչակած պետությունն է և խաչքարերի քանդակագործության արվեստը տարածված է միայն հայ ժողովրդի մոտ:

Այս համալիրի նշանակությունը նաև այն է, որ բուլղարական հողում է ստեղծվել կիրիլիցան 886 թվականին: Եվ այս հանգամանքով են հպարտանում ոչ միայն երկրի նախագահը, այլև բուլղարացի ժողովուրդը, որ կիրիլիցան բուլղարական Պլիսկայից է տարածվել աշխարհով մեկ:

Նշենք, որ այստեղ շատ են գալիս դպրոցականների խմբեր, անցկացվում են տարբեր սեմինարներ ու գիտաժողովներ, անցկացվում է միջազգային սլավոնական փառատոն: «Մենք շատ ուրախ ենք, որ մատաղ սերունդը հաճախում է այս թանգարանը: Երբ բուլղարները դուրս են գալիս թանգարանից, հպարտության զգացում են ապրում» – ասում է Կարեն Ալեքսանյանը:

Հակոբ ԱՍՍՐՅԱՆ
«ՕՐԵՐ», Պրահա

Հայերը Երկրորդ աշխարհամարտում եւ հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական Մեծ պատերազմում



Քանի՞ հայկական դիվիզիա կար խորհրդային զորքերի կազմում

Պատերազմի սկզբում (1941 թ. հունիսից 1942 թ. հունվար) Սովետական Հայաստանում ձևավորվեց ազգային 6 դիվիզիա: Առաջինը ռազմաճակատ մեկնեց 390-րդ դիվիզիան, որը 1942 թ. մայիսին, մասնակցելով Կերչի պաշտպանությանը, գրեթե ամբողջությամբ ջախջախվեց, զոհվեց նաեւ նրա հրամանատար Սիմոն Չաքյանը: Իր ուղին Բեռլինում ավարտած միակ հայկական զորամիավորումը 89-րդ Թամանյան դիվիզիան է, որն իր անունը ստացել էր Թաման թերակղզու համար մղվող մարտերում գործած սխրանքների համար:

Ղեկավարված 76-րդ հայկական հրաձգային դիվիզիան, որը հսկում էր հայ-թուրքական սահմանը, պատերազմը սկսվելուն պես նետվեց մարտի եւ հաջողություններ ունեցավ հատկապես Ստալինգրադի ճակատամարտում, իսկ 261-րդ հրաձգային դիվիզիան մնաց պաշտպանելու հայ-թուրքական սահմանը:

Մարտական փայլուն ուղի անցան նաեւ հայկական 408-րդ եւ 409-րդ դիվիզիաները: Վերջինս հաղթականորեն հասավ մինչեւ Չեխիա ու Ավստրիա:

Ովքե՞ր էին Սովետական Հայաստանի հերոսները

Հայերը խորհրդային Միության ժողովուրդների շարքում չորրորդն էին ռազմաօդային ուժերի, ռազմածովային նավատորմի գեներալների ու հրետանային զորքերի սպաների կազմում եւ վեցերորդը՝ ԽՍՀՄ հերոսների ցանկում: Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացավ 107 հայորդի, 80 հազարը պարգևատրվեց մեդալներով եւ շքանշաններով:

Պատերազմի բոլոր ճակատներում ռազմական գործողությունների նախագծման ուղղակիորեն մասնակցում էր ավելի քան 60 հայ հրամանատար: Սովետական միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը, ավիացիայի մարշալ Արմենակ Խամիբեյանը, գրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանը, ԽՍՀՄ նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովը սովետական բանակի ամենակարկառուն ղեմերից էին: Նելսոն Ստեփանյանը ԽՍՀՄ կրկնակի հերոսի կոչում ստացած 6 ռազմածովային օդաչուներից էր:

Ի՞նչ կորուստներ կրեցին հայերը պատերազմում

1920 թ. Հայաստանի բնակչությունը 700 հազար էր: Մինչեւ

պատերազմի սկիզբը այն հասել էր 1,5 մլն-ի, սակայն շարունակում էր մնալ ամենափոքրը խորհրդային Միության կազմում (ԽՍՀՄ բնակչության 1,1%-ը): Չնայած այս հանգամանքին՝ 1941-1945 թթ. սովետական բանակ զինակոչվեց շուրջ 500 հազար հայ, նրանցից յուրաքանչյուր երկրորդը ռազմաճակատից ետ չեկավ: Սովետական Հայաստանի հայերի կորուստները կարելի է համեմատել պատերազմում ամերիկյան կողմի կորուստների հետ՝ ավելի քան 300 հազար մարդ:

Ինչպե՞ս էր գործում Սփյուռքը հակաֆաշիստական ճամբարում

Ֆաշիզմի դեմ պայքարում իր ներդրումն ունեցել նաեւ Սփյուռքը: ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Միդիայում, Լիբանանում, Իրաքում, Եգիպտոսում, Ռումինիայում, Կիպրոսում, Հորդանանում եւ այլ երկրներում ստեղծված հայկական կազմակերպությունները ռազմական օգնություն էին տրամադրում խորհրդային զորքերին:

1943 թ. Էջմիածնում դրամահավաքի համընդհանուր կոչի արդյունքում ստեղծվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, որը հիմնականում կազմավորվել էր սփյուռքահայերի ներդրումների հաշվին:

Ավելի քան 30 հազար հայ կռվում էր դաշնակիցների զորքերում, նրանցից 20 հազարը՝ ամերիկյան եւ կանադական ուժերի կազմում:

Հայերն աչքի ընկան նաեւ Ֆրանսիայի Դիմադրության շարժման ընթացքում, որի հիմնադիրներից մեկը Միսաք Մանուշյանն էր, որի մասին հիշում է Շառլ Ազնավուրը իր «Անցած օրեր» գրքում:

«Նախքան դիմադրության հերոս դառնալը Միսաք Մանուշյանը հայկական համայնքում հատկապես ճանաչված էր իր բանաստեղծություններով: 1944 թ. Մանուշյանն ու իր խումբը ձերբակալվեցին Գետապոլի կողմից: Միսաքի կինը՝ Մելինեն, խուճապահար թաքնվեց մեր տանը: Մենք անհանգիստ սպասում էինք լուրերի, դրանք վերջնականորեն վատը դուրս եկան, քանի որ այդ հիմադրականները, որոնց գերմանացիներն անվանում էին «ախաբեկիչներ», գնդակահարվեցին»:

Միսաք Մանուշյանը հետմահու ստացավ Ֆրանսիայի ազգային հերոսի կոչում:

Ինչո՞ւ էին հայերը կռվում նաեւ Գերմանիայի կողմից

Գերմանական բանակը Երկրորդ աշխարհամարտի ընթացքում գերելարված հայերից կազմավորում է Հայկական լեգիոնը: Այս տարիներին տեղեկություններ են պահպանվել Գարեգին Նժդեհի, Դրաստամատ Կանայանի եւ գերմանական կողմի համագործակցության մասին:

«Գերմանիայում հայերի ոչ արիական ծագման մասին պաշտոնական հարց հարուցվեց, – գրում է այդ շրջանում Բուլղարիայում գտնվող Գարեգին Նժդեհը: – Վերջապես, որպես հակահայկական սադրանքների արդյունք, Բեռլինում պաշտոնապես հայտարարվեց, թե հայերը վերջնականապես անցել են Գերմանիայի թշնամիների կողմը, ու էթե պարզվի, որ բոլոր հայերը հակագերմանական տրամադրություն ունեն, ապա գերմանական կառավարությունը հայերի նկատմամբ կկիրառի առավելագույնս խիստ միջոցներ: Գերմանիայի դեսպանն ու բուլղարական իշխանությունները խորհուրդ տվեցին որեւէ մեկին Բեռլին ուղարկել, որպեսզի նա տեղում անհրաժեշտ բացատրություններ տա եւ հայերին ազատի իրենցից ճակատագրին արժանանալուց: Բուլղարա-հայկական կոմիտեի եւ Սոֆիայի հայերի ցանկությամբ, ես մեկնեցի Բեռլին»:

Պատերազմական գործողությունների՝ հօգուտ ֆաշիստական ճամբարի ընթանալու դեպքում հայկական այս ուժերը մտադիր էին մտնել Երեւան՝ ապահովելու հայ ժողովրդի անվտանգությունն արեւմուտքից ներխուժող թուրքերի դեմ:

Պատրաստեց Ամեթա ԿԺՂՅԱՆԸ

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՃԱՄՓԱՆԵՐԻՆ...

Երեք զինվոր՝ Ղարազյոզյան ընտանիքից

66 տարի առաջ, հունիսի 22-ին, վերահաս պատերազմն ալեկոծեց բազմազգ Խորհրդային Միության անդրորդ: Ֆաշիստական Գերմանիայի հարձակմանը դիմակայելու, հայրենիքը պաշտպանելու մեկնեցին բոլոր հանրապետություններից: Պատերազմին մասնակցած բազմաթիվ հայորդիների շարքում կոչվել են նաև մեր մարզի շատ ներկայացուցիչներ:



Վազգեն Մեղիքի Ղարազյոզյան

Օրերս «Լոռու մարզ» թերթի խմբագրությունը հյուրընկալել էր 85-ամյա Վազգեն Ղարազյոզյանին, ով իր երկու եղբայրների Գուրգենի և Գեղամի հետ մասնակցել է Հայրենական պատերազմին:

Նրա հայրը դարաբիլիսեցի Մեղիք Ղարազյոզյանը ևս զինվոր է եղել՝ մասնակցել առաջին աշխարհամարտին: Մեղիքը 10 զավակ է ունեցել: 1935 թվականին, որպես բազմազավակ ընտանիքի՝ ԽՍՀՄ իշխանությունների կողմից զուտ է հատկացվում Ղարազյոզյաններին, որով նրանք տուն են կառուցում Կիրովականի Դիմաց թաղամասի կամրջի շրջակայքում: Պատերազմն սկսվելու պես բանակ է մեկնում մեծ եղբայրը Գեղամ Ղարազյոզյանը (ծնվել է 1921 թ.): Կոչվել է Տուսիսի մոտակայքում: «Շուտ զորացրվեց մեծ եղբայրս՝ 1942-ի նոյեմբերին, որովհետև ծանր վիրավորվեց, զրկվեց թևից: Երկար բուժվելուց հետո, որպես առաջին խմբի հաշմանդամի, զորացրեցին» — պատմում է Վ. Ղարազյոզյանը: Նրա կրտսեր եղբայր Գուրգենը (ծնվել է 1925 թ.) պատերազմ է մեկնել 1943-ին, ծառայել Պարսկաստանում: «Թեհրանում կոնֆերանսի օրերին Գուրգենը ծառայում էր հսկող պահակախմբում: Չորացրվել է 1946 թվականին, ընտանիք կազմել: 1989-ին մահացավ» — շարունակում է զրույցը մեր հյուրը: Այնուհետև պատմեց իր մասին: Վազգեն Ղարազյոզյանը մարտական երկար ու դժվար ճանապարհ է անցել,



Դեկտեմբեր 1942 թ., աջից ձախ Վազգեն Մեղիքի Ղարազյոզյան, Ռաֆաել Հմայակի Ղարազյոզյան, Արդյոմ Սկրոյան

կոչվել Մերձբալթիկայում, Ռուսաստանում: Նա թվարկեց այն բազմաթիվ քաղաքները, որոնց պաշտպանության կամ ազատագրման համար պայքարել է: Վ. Ղարազյոզյանը պատերազմ մեկնել է 1942-ին, կոչվել մինչև պատերազմի ավարտը: Տուլայի մոտա-

կայքում, մարտական գործողությունների ժամանակ, վիրավորվում է, բուժվելուց հետո կրկին մեկնում բանակ: Վ. Ղարազյոզյանը մարտական սխրամքների համար բազմիցս պարգևատրվել է մեդալներով և շքանշաններով: Չորացրվել է 1948-ին, և հենց հաջորդ տարին ընտանիք կազմել: Չորս զավակների հայր է: Երկար տարիներ աշխատել է «Կիրշինտրեստում» որպես ներկարար բանվոր՝ մինչև 1992 թվականը:

Երիտասարդ օրերի մասին հուշերը միշտ վառ են մնում մարդու հիշողության մեջ: 85-ամյա Վազգեն պապը բացառություն չէր: Մեծ հայրենականի մասին հուշերը չեն խամրել: Նա շատ հանգամանորեն պատմեց իր անցած մարտական ուղու մասին՝ որ ճակատում է կռվել, ինչ զորամասում և ում հրամանատարությամբ՝ չմոռանալով ոչ մի տարեթիվ և տեղանուն:

Նոսրանում են Մեծ հայրենականի մասնակցների շարքերը և նրանց նկատմամբ ուշադրությունը պետք է կրկնապատկվի: Հուսով ենք՝ այսպես կմտածեն նաև բոլոր նրանք, ումից կախված է վետերանների բակեցությունը:

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԼՈՐՈՒ ՄԱՐԶ № 48, հունիսի 23, 2007 թ.




Գեղամ, Վազգեն և Ռաֆաել Ղարազյոզյանները, Համբարձում Դանդիլյանը ու Վանդուս Ղարազյոզյանը

ԱՆՍՈՎՈՐ ԴԵՊԵ

44 ՏԱՐԻ ԳՆԴԱԿԸ ԳԼԽՈՒՂԵՂՈՒՄ

Կիրովականի Լ. Արեշյանի անվան հիվանդանոցում դիախեռման ժամանակ անսովոր փաստ արձանագրվեց: Հանգուցյալի գլխուղեղի աջ կիսագնդի մակերևույթից 7 սմ խորության վրա, անցնելով ուղեղային հյուսվածքի սովորաշերտը, գնդակը հայտնվել էր մարդու գլխուղեղի աջակողմյան փորոքի խոռոչում: Գնդակի երկարությունը մոտավորապես 4 սմ է, տրամագիծը՝ 1 սմ, կշիռը՝ 14 գրամ:



Այնուհետև պատմում է ինքը՝ պաթոլոգ-անատոմիկ, դիախեռող բժիշկ Ա. Ն. ՊԱՎՅԱՆԸ.

— Այս դեպքը ապշեցուցիչ է, եզակի: Վիրանքը լիովին սպիացել էր: Գլխուղեղի ծանր վնասվածքից հետո վերապրուկային երևույթները, շնորհիվ օրգանիզմի անհատական, ազդազերծող միջոցների (առանց վիրաբուժական միջամտության), մարտիկին չէին գրկել հետագա ակտիվ ապրելակերպ ապահովելու հնարավորությունից: Գլխուղեղի նման բնույթով ու ծավալով մույնիսկ ամենաթեթև վնասվածքները հաճախ մահվան պատճառ են դառնում:

Բժշկական պրակտիկայում հազվադեպ է պատահում, երբ կենսականորեն կարևոր օրգաններում (ուղեղ, սիրտ, թոքեր և այլն) օտար մարմինների առկայության դեպքում մարդը շարունակում է ակտիվ ապրելակերպ վարել, աշխատել: Այդպիսի դեպքերում մահվան պատճառը, շատ



Մկրտիչ Արտեմի ՄԱԿԱՐՅԱՆ

հաճախ, հանդիսանում է մի այլ ախտաբանություն, որն առնչություն չունի օրգանիզմում գտնվող օտար մարմնի հետ: Համանման երևույթ է վերոնկարագրյալը. մինչդեռ գլխուղեղի ծանր վնասվածքից հետո մարդը 44 տարի շարունակել է ապրել ու աշխատել՝ ի ուրախություն հարազատների ու բարեկամների:

— Պատկերացնո՞ւմ եք, որքան էլ փնտրեցի, մեր պրակտիկայում այդպիսի դեպքի չհանդիպեցի. մինչև այժմ բժշկական գրականության մեջ չկան արժանահավատ, գիտականորեն հիմնավորված տվյալներ, որոնք բացատրեին օրգանիզմի կենսունակության այդքան կազույստական (դիպլածային) երևույթը:

Իսկ դեպքը, իրոք, կատարվել է ...1944 թվականի գարնանը: Գերմանական ֆաշիստներից հայրենիքը ազատագրելիս Կիրովոգրադյան համար 409 դիվիզիայի 684-րդ գնդի դասակի հրամանատար, կիրովականցի 42-ամյա Մկրտիչ Արտեմի ՄԱԿԱՐՅԱՆԸ Մոլդավիայում, Քիշինևից ոչ հեռու մոլդով մարտերից մեկի ժամանակ հրազենի վերք ստացավ գլխում:

Ինչպես վերիիշում և պատմում է դեպքի ակնմատեսը՝ նույն գնդի նախկին սանհրատարական հրահանգիչ, կիրովականցի Հրանտ Հովհաննեսի ԲՈՒԼԱՊԱՐՅԱՆԸ, նա առաջինն է օգնություն ցույց տվել իր հայրենակից մարտընկերոջը: Թշնամու կրակի տակ, կյանքը վտանգի ենթարկելով, նա դասակի հրամանատարին կռվի դաշտից հասցրել է բուժանգումարտակ: Արագորեն ապաքինվելով, Մ. Մակարյանը մինչև 1944 թվականի օգոստոս մնացել է բանակի շարքերում: Նախկին սանհրահանգիչը այսօր արդեն զարմացած հիշում է, որ Մ. Մակարյանին օգնություն ցույց տալու և տեղափոխման ժամանակ վերջինիս գիտակցությունը տեղն էր, մտակողմնորոշումն ու շարժադաշնությունը խախտված չէին, անկաշկանդ հաղորդակցվում էր շրջապատի հետ...

1944 թվականի օգոստոսին դասակի նախկին հրամանատարը զորացրվեց և վերադարձավ հայրենի քաղաք, ուր մինչև 1957 թվականը շարունակեց ակտիվորեն աշխատել, զբաղվելով նաև ֆիզիկական աշխատանքով: 1957-ից խիզախ մարտիկը գտնվում էր վաստակած հանգստում, բայց որպես հնազույն կոմունիստ (1920 թ.) և վետերան ակտիվորեն մասնակցում էր քաղաքական-հասարակական կյանքին: Մահացավ 1988 թվականի մարտի 22-ին, 86 տարեկան հասակում...

«ԿԱՅԸ», № 12 (7919), 1988 թ. ապրիլի 5

ԿՐԾՔԱՆՇԱՆԸ՝ ՎԵՏԵՐԱՆԻՆ

«ՄՄԿ4-ում գտնվելու 50 տարի» կրծքաշանը մեր քաղաքում առաջինը հանձնվեց կուսակցության վետերան, Հայաստանում սովետական կարգերի համար պայքարի մասնակից, 1920 թվականից ՄՄԿ4 անդամ Մկրտիչ Արտեմի Մակարյանին:

Պատվավոր կրծքանշանը հանձնեց և վետերանին շնորհավորեց ՀԿԿ քաղկոմի առաջին քարտուղար Յ. Օհանյանը: Շնորհակալության խոսք ասաց Մ. Մակարյանը: Կրծքանշանը հանձնելու արարողությանը ներկա էին ՀԿԿ քաղկոմի բյուրոյի անդամներ, ապարատի աշխատողներ, մամուլի և ռադիոյի ներկայացուցիչներ, երիտասարդ կոմունիստներ:

Մկրտիչ Մակարյանի, նրա սերնդակիցների կյանքն ու աշխատանքը կուսակցության գործին հավատարմորեն ծառայելու, աճող սերնդին հեղափոխական ավանդույթներով դաստիարակելու լավ օրինակ է:

Մկրտիչ Մակարյանն այժմ Կիրովականի ամենաստաժավոր կոմունիստն է: Ծնվել է Իջևանի շրջանի Ջողագ գյուղում: Պատանեկության տարիներին կրել է բազմաթիվ զրկանքներ: 1920 թվականին Գյանջայում (այժմ Կիրովաբադ) շփվել է բոլշևիկյան կազմակերպությունների հետ, կատարել նրանց հանձնարարությունները, իսկ աշնանը՝ 11-րդ կարմիր բանակի առաջադրման ընթացքում, միացել է ապստամբական ջոկատներին, ակտիվորեն մասնակցել Ուզունթալա, Սևբաթ, Թալա, Աջաջուր, Սարիգյուղ, Ջողագ և այլ գյուղերում սովետական իշխանության հաստատմանն ու ամրապնդմանը, օգնել կուսբջիջների կազմակերպման գործին:

Կիրովականցիները լավ են ճանաչում նրան: 1930 թվականից բնակվում է մեր քաղաքում: Աշխատել է երկաթուղային հանգույցում մինչև 1934 թվականը: Այնտեղ աշխատում

էր Պետրոսյան Սերգոյն, որպես պետ նա մի շարք հրամաններով շնորհակալություն է հայտնել Մ. Մակարյանին: 1934 թվականին գործուղվել է երկաթուղային հանգույցի կուսկազմակերպության կողմից երևանի Բերիայի անվան կոմունիստական համալսարանում սովորելու: Այնտեղ սովորել է մինչև 1935 թ., որտեղ Ավետիսյան Արամայիսը դպրոցի կուսկոմիտեի քարտուղարն էր, իսկ Մ. Մակարյանը բյուրոյի անդամ: Ընտանիքով ծանրաբեռնված լինելու պատճառով դիմել է դպրոցի դիրեկտորին, որպեսզի նա ֆինանսական օժանդակություն ցույց տա երկրորդ տարին սովորելու համար: Այդ հնարավորությունները չտվեցին, փոխարենը տվեցին տարեկետում: Այդտեղից վերադառնում է Կիրովական աշխատանքի է անցնում քաղաքային տնտեսությունում որպես ֆերմայի վարիչ 1935-1936 թ. հունվարը: 1936 թ. հունվարից աշխատանքի

160

է անցել կղմինդրերի գործարանում որպես կոմիտեի քարտուղար, միևնույն ժամանակ դիրեկտորի տեղակալ մինչև 1936 թ. նոյեմբերը: 1936 թ. նոյեմբերից Կիրովականի քաղսովետի հանձնարարությամբ 4600 ռուբլի գումարով կազմակերպել է Կիրովականի լիմոնդի գործարանը, որտեղ աշխատել է մինչև 1941 թ.:

Այդ տարիների ընթացքում փոքր գործարանը պլանները կատարել է եռակի անգամ, և արդեն կարիք զգացվեց այն կոմբինատ դարձնելու:

1939 թ. գործարանի եկամուտներով պետք է կառուցվեր 375000 ռ. արժողությամբ մեկ հարկանի գործարանի շենք, բայց ի շնորհիվ Մ. Մակարյանի հաջող տնտեսավարության, հնարավորություն է ստեղծվում նույն գումարով կառուցելու նաև գործարանի երկրորդ հարկը: Կատարված աշխատանքների համար նա միութենական սննդի ժողկոմատի կողմից պարգևատրվում է կրծքանշանով և դրամական պարգևով: Միևնույն ժամանակ միութենական սննդի ժողկոմատի կողմից բրոնյաի մեջ էր: Առանց նրանց սանկցիայի Մ. Մակարյանին իրավունք չունեին ազատելու աշխատանքից, որի կանոնները գրված էր կրծքանշանի վկայականի մեջ:

Երբ սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, չնայած ընտանիքի ծանրաբեռնվածությանը (ունեի հինգ երեխա՝ մեկ տղա և չորս աղջիկ) և տարիքի պատճառով մորի լիզազմի եմթակա չլինելը, կամավոր մեկնում է բանակ և այդ օրվանից խնդրում է, որ իրեն ուղարկեն իրենաճային մարտկոց: Մինչև 1944 թ. լեյտենանտի կոչում ստանալը ֆրոնտում (ճակատում) եղել է կուսկազմակերպիչ, նշանառու: Այդ ժամանակաշրջանում Մոզդոկից, Կուբան, Ազովի ծով, 2-րդ Ուկրաինական ճակատ, Կիրովգրադ, Բեսարաբիայով մինչև Ռումինիա անցել է առաջին գծում: Այդ ժամանակ վեց անգամ թեթև վիրավորվել է, իսկ յոթերորդ անգամ ծանր գլխից վիրավորվելով, վերադարձել է տուն որպես 2-րդ կարգի հաշմանդամ, այդ ժամանակաշրջանում պարգևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով:

1944 թվականի օգոստոսին դասակի նախկին իրամանատարը զորացրվեց և վերադարձավ հայրենի քաղաք, ուր մինչև 1957 թվականը շարունակեց ակտիվորեն աշխատել կոլտնտեսային շուկայում, քաղաքում, տպարանում և այլ կազմակերպություններում, զբաղվելով նաև ֆիզիկական աշխատանքով:

1945 - 1957 թթ. ընտանիքի անդամների թիվ ավելացավ ևս հինգով: Իր կնոջ՝ Շարմաղ տատիկի հետ միասին դաստիարակեցին տաս երեխա՝ չորս տղա և վեց աղջիկ:

Շատ անգամ ընտրվել է սկզբնական կուսկազմակերպության քարտուղար: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, ծանր վիրավորվել: Այսօր էլ նա ակտիվորեն մասնակցում է մեր քաղաքի հասարակական կյանքին:

«ԿԱՅՏ», № 18 (6839), 1982 թ. փետրվարի 11

1941–1945 թթ. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄ

ՈՋ ՈՔ ՋԻ ՄՈՌԱԳՎԵԼ, ՈՋԻՆՋ ՋԻ ՄՈՌԱԳՎԵԼ

Հուշարձան Հայրենական Մեծ պատերազմում զոհված ԲԵԿՉՅԱՆՆԵՐԻ

Հայրենական Մեծ պատերազմում զոհված Բեկյանների հուշարձանի նախաձեռնողը եղել է Սուրեն Կոստինի Բեկյանը:

Բեկյանները հանգանակություն են կատարել և 1960-ականներին կառուցել են հուշարձանը: Հուշարձանի ետևի կողմին (լուսանկարում լավ չի երևում) գրված է մեր գյուղացի գրող, հեղափոխական Ավագ Կոճիյանի քառատողը

«Եվ եթե ընկնեմ կովում այս ահեղ
Ղու լաց չլինես, մայր իմ սիրելի,
Երբ հաղթանակը կմա փառահեղ՝
Ամեն ոք սիրած որդիդ կլինի»:



Ավելի ներքև գրված է. – **Չոհվածների
անմահ հիշատակին Բեկյաններից**

Ստորև ներկայացնում են Հայաստանի զինվորական արխիվից վերցրած ցուցակը, որում ներառված են Հայրենական Մեծ պատերազմում զոհված համազգիմանցի Բեկյանները, հուշարձանի վրայի գրածի հետ կա որոշակի անհամապատասխանություն, կարծում են, որ պետք է հիմք ընդունել հուշարձանի վրայի գրածը:

Բեկյան Սարգիս Սիմոնի (ծնված 1923 թ.)
26.10.1941 – 28.03.1942
Բեկյան Արամ Հմայակի (ծնված 1922 թ.)
26.12.1941 – 18.07.1942
Բեկյան Համբարձում Տիգրանի (ծնված 1919 թ.)
10.11.1939 – 01.03.1944

Բեկյան Իվան Կամսարի (ծնված 1911 թ.)
23.6.1941 – 28.11.1942
Բեկյան Վաղարշակ Ալեքսանի (ծնված 1918 թ.)
10.11.1939 – 1941
Բեկյան Հայկ (Տիրատուր) Ասատուրի (ծնված 1901 թ.)
05.06.1941 – 12.12.1942
Բեկյան Համազասպ Գեղամի (ծնված 1920 թ.)
1940 – 14.03.1942
Բեկյան Արշավիր Ասատուրի (ծնված 1907 թ.)
24.06.1941 – 03.01.1943
Բեկյան Անուշավան Աստուրի (ծնված 1918 թ.)
1939 – 20.01.1942
Բեկյան Սամսոն Սահակի (ծնված 1923 թ.)
14.08.1942 – 10.03.1944



Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներից առավել աչքի է ընկել հետախույզ, Լենինի շքանշանակիր **Սուկույ Սիսակի Բեկյանը**, ում մասին «Գործնարար» ամսագրում Նյույթ կա հրապարակված:

ԱՌԱՆՑ ԱՍՏԴԻ ՀԵՐՈՍԸ

«Հայրենական Մեծ պատերազմի մարտերում կատարած սիրագործությունների համար Սուկույ Բեկյանը երկու անգամ ներկայացվել է հորհրդային Միության հերոսի կոչման: Երրորդ անգամ ներկայացվել է պատերազմից կես դար անց...»:

Ավագ ԽԱՌԱՏՅԱՆ

ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԱՆԸ՝ ԸՆԴԴԵՄ ՎԱՅԱՆ ՏԵՐՅԱՆԻ

Միկոյանն առաջարկել է Լենինին հրաժարվել ցեղասպանության հատուցման թուրքահայաստանի ստեղծման պահանջից: Այդ մասին է վկայում Միկոյանի 1919 թվականի դեկտեմբերին Լենինին հասցեագրված «Կովկասյան հարցի մասին» զեկուցագիրը, որի բնագիրը պահվում է Սոցիալ-քաղաքական պատմության ռուսաստանյան պետական արխիվում (ՄԴԱՍՊ): Առաջին անգամ դրա թեզիսները հրապարակվել են միջազգային իրավունքի հայտնի մասնագետ Յուրի Բարսեղովի գրքում եւ վերատպվել Lragir.am թերթում: Այդ փաստաթղթի հիման վրա բոլշևիկյան առաջնորդները հրաժարվեցին Հայկական գործերի կոմիսարիատի փաստացի ղեկավար Վահան Տերյանի կողմից առաջարկված եւ որպես իրավական ակտ ընդունված «Թուրքահայաստանի մասին» հայանպաստ դեկրետից եւ որդեգրեցին Միկոյանի թուրքամետ առաջարկը: «Անաստվածը», ինչպես ժողովուրդն էր նրան անվանում, առաջարկում էր համաձայնել Հայոց ցեղասպանության արդյունքում ստեղծված իրավիճակի հետ եւ հրաժարվել Թուրքահայաստանի ստեղծման, այսինքն, ցեղասպանության հատուցման պահանջից: Ավելին, Միկոյանի կարծիքով, Հայկական հարցն այլեւս գոյություն չունի, քանի որ ցեղասպանության արդյունքում, «այսպես կոչված Թուրքահայաստանում ապրում են գրեթե միայն մահմեդականներ»:


Ըստ Միկոյանի, բոլշևիկները չեն կարող համաձայնել «հայ շովինիստներին» հետ, այլապես «ինքնավարության իրավունք կտրվի մեռածներին»: Նրա կարծիքով, քանի որ հայերը կուսակցվել են Կովկասում եւ այլեւս չեն բնակվում Թուրքահայաստանում, փաստորեն, վերածվել են կովկասյան ազգի: Հետեւաբար, նրանց հարցը դադարել է եվրոպական, միջազգային հարց լինելուց վերածվելով «սպեցիֆիկ ռուսաստանյան հարցի, ինչպիսիք են վրացականը, ադրբեջանականը եւ այլն»:

Իսկ ինչ էր պահանջում Տերյանի կողմից առաջարկված եւ Ռուսաստանի կառավարության կողմից ընդունված իրավական ակտը «Թուրքահայաստանի մասին» դեկրետը:

Ըստ Լենինի եւ Ստալինի ստորագրած այդ փաստաթղթի, բոլշևիկյան կառավարությունը պաշտպանում էր «Ռուսաստանի կողմից օկուպացված Թուրքահայաստանի հայերի ազատ ինքնորոշման ընդհուպ մինչեւ լիակատար անկախության իրավունքը»: Եվ «հայ ժողովրդի ազատ հանրաքվեի իրավունքը» երաշխավորելու համար անհրաժեշտ էր համարում տարբեր երկրներում ցրված գաղթական, ինչպես նաեւ վտարանդի հայերի անարգել վերադարձը Թուրքահայաստան: Բոլշևիկյան կառավարությունն այդ դեկրետում նաեւ խոստանում էր թուրքական իշխանությունների հետ խաղաղության բանակցությունների ժամանակ պնդել պատերազմի ժամանակ իրենց կողմից բռնի կերպով Թուրքիայի խորքերի արտաքսված հայերի անարգել վերադարձը Թուրքահայաստան: Պետք է ընտրվեր հայ ժողովրդի պատգամավորների խորհուրդ: Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանին էլ հանձնարարվել էր ամեն տեսակ օգնություն ցույց տալ Թուրքահայաստանի բնակչությանը դեկրետի իրականացման գործում:

Վահան Տերյանն իր հեղինակած «Թուրքահայաստանի մասին զեկուցագրում» եւ «Թուրքահայաստանի մասին դեկրետի» նախագծում առաջարկել էր «վճռականորեն պաշտպանել թուրքահայերի ազգային լիակատար ինքնորոշման ձգտումը», հայրենիք վերադարձնել բոլոր բռնի արտաքսվածներին եւ հայտարարել, որ «ռուսական գործերը դուրս չեն բերվի պատերազմի իրավունքով Հայաստանի գրավված մասից»: Այսինքն, ցեղասպանության հետեւանքով փախստական դարձած անձինք պետք է վերադառնային հայրենիք, եւ կազմավորվեր Թուրքահայաստանը: 1917 թ. դեկտեմբերի 29-ին դեկրետը ստորագրել էր Լենինը, սակայն Ստալինի պահանջով դրանից հանվել էր Էրզրումի, Վանի, Բիթլիսի վիլայեթներում առժամանակ որոշ քանակականորեն ռուսական գործ թողնելու անհրաժեշտության մասին կետը, ինչը կապահովեր հայերի անվտանգությունը եւ աքսորվածների ու փախստականների վերադարձը: Ընդհանրապես, այդ կետը փոխարինվել էր «Թուրքահայաստանի տարածքից գործերի դուրսբերման եւ նրա բնակիչների անձնական եւ ունեցվածքային անվտանգության ապահովման նպատակով հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ ստեղծման» մասին կետով:

Թե ինչ փաստարկ է բերել Ստալինը արդարացնելու համար գործերի դուրսբերման իր պահանջը, իմանում ենք նրա հայ ժողովրդին ուղղված «Թուրքահայաստանի մասին» կոչից. «Թուրքահայաստանը թերեւս միակ երկիրն է, որը գրավված է Ռուսաստանի կողմից «պատերազմի իրավունքով ... այսօր



գերմանաթուրքական իշխանությունները, հավատարիմ իրենց իմպերիալիստական բնույթին, չեն թաքցնում օկուպացված շրջանները բռնությամբ իրենց իշխանության տակ պահելու ցանկությունը... Թող իմանան Ռուսաստանի ժողովուրդները, որ ռուսական հեղափոխությանը եւ նրա կառավարությանը խորթ են զավթման ձգտումները: Թող իմանան բոլորը, որ ազգային հալածանքի իմպերիալիստական քաղաքականությանը ժողովրդական կոմիսարների խորհուրդը հակադրում է ճնշված ժողովուրդների ամբողջական ազատագրման քաղաքականությունը»:

Ձորքերի դուրսբերման հարցով Տերյանը բուռն վեճ է ունեցել իր փաստացի անմիջական ղեկավար Ստալինի հետ՝ ապարդյուն: Սակայն դեկրետը հույս էր թողնում, որ դուրսբերումը կձգձգվի, քանի որ դրա 4-րդ կետում ասված էր, որ Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանին «հանձնարարվում է ձեռնամուխ լինել խառը հանձնաժողովի ստեղծման գործին Թուրքահայաստանի տարածքից գործերի դուրսբերման ձեռք եւ ժամկետի որոշման համար»:

Սովետական Միությունում բրոշյուրների տեսքով տպագրվում էին հին բոլշևիկների հուշերը Լենինի մասին: Նրանցից մեկը Լենինին հարցրել էր, թե ինչու են պաշտոններ տրվում մարդկանց, որոնք նվիրված չեն բոլշևիկյան գաղափարներին: Լենինը պատասխանել էր, որ դա ժամանակավոր երեւույթ է. իրենք կօգտագործեն այդ մարդկանց հեղինակությունը, գիտելիքներն ու հմտությունները, իսկ հետո, երբ ցանկանան, կհրաժարվեն նրանցից: Դրանով էին առաջնորդվում բոլշևիկյան առաջնորդները...

Ստալինը, իհարկե, չէր կարող հանդուրժել այնպիսի հայրենասեր, սկզբունքային ու անկոտրել ստեղակալի, ինչպիսին Տերյանն էր: Նրան այդպիսի ենթակյանքը պետք չէին: Նրան պետք էին անձինք, որոնք անխոս կկատարեին նրա կամքը: Բացի այդ, նա Տերյանի կարծիքին տրամադծորեն հակառակ կարծիք ուներ հայկական պետականության ապագայի մասին: Այնպես որ, ժամ առաջ պետք էր պաշտոնագրվել պոետին, որովհետեւ տարզ էր, որ նա չի հրաժարվի հայերի շահերն ու իրավունքները պաշտպանելուց: Նրա փոխարեն անհրաժեշտ էր նշանակել անձանց, որոնք կհամաձայնեին ստորագրել հայերի շահերը ոտնահարող փաստաթղթեր: Դրանք էին Տերյանի կատաղի հակառակորդ, տխրահոշակ Գուրգեն Հայկունին եւ, ինչպես հայտնաբերել է գրականագետ Դավիթ Գասպարյանն իր «Փակ դռների գաղտնիքը» գրքում, Տերյանի «ընկեր» Պողոս Մակինցյանը: Երեւի թե պատահական չէր այն իրողությունը, որ Կարսի հակահայկական պայմանագիրը ստորագրելու «պատիվը» վերապահվել էր հենց Մակինցյանին... Պարզվում է, որ այդպիսին էր նաեւ Միկոյանը, որը Լենինին եւ Ստալինին հնարավորություն է տվել արդարացնել Թուրքահայաստանի հանձնումն Աթաթուրքին:

1920 թվականի հունվարի 7-ին Վահան Տերյանը վախճանվեց Օրենբուրգում: Պետք էր չէր հասցրել մահանալ, երբ 1919 թ. դեկտեմբերին Միկոյանը սպանեց Տերյանի կյանքի գործը: Այդ օրերին Լենինին հասցեագրված իր զեկույցում նա գրում է. «Մեծագույն սխալ էր Թուրքահայաստանի ինքնորոշման մասին Սովետական Ռուսաստանի դեկրետը (1917 թ.)... Պետք է ընդունել, որ... Թուրքահայաստանի մասին գաղափարը

Նորիկ ՍԱՖԱՐՅԱՆ

ԿԱԿԱՉՆԵՐԸ

Ձորի կողին ավեր վանք է,
Թափուր գահ է աստվածների,
Ո՛ր անօրեն ձեռքն է քանդել,
Ողջը մատնել հուր ու սրի:
Աստվածային անտրտունն է,
Ոչ մի աղետ նա չի հիշում,
Որմ ու խաչքար լուռումունջ են՝
Իրիկունի վառվող մուծում:
Միայն որպես լուռ վկաներ,
Սրտում պահած հառաչները,
Հեծկլտում են, բոցկլտում են
Կակաչները, կակաչները:
Կիսակործան խորանի մեջ,
Խաչերի մեջ, խաչքարերում,
Գմբեթների ճեղքներում նեղ,
Խոյակներում, որմի կողին,
Զրնգում են ասես նորից
Յաթաղանի շառաչները...
Կարմիր եռք են ու կարմիր ճիչ
Կակաչները, կակաչները:
Վերջին անգամ, գուցե, այստեղ
Աստված ինքն է մրժնջացել,
Ձորը, ասես, արևի դեմ
Իր արյունոտ կուրծքն է բացել:
Իրիկունը քարերին շեկ
Պարզնել է կրակն իր բարկ,
Ոգինները բռնել են պար
Կակաչների տեսքով սևակ:
Խառնվել են աղոթք ու ճիչ,
Հառաչներն ու բառաչները,
Ողջակիզվել քարեր ու խիճ...
Կակաչները, կակաչները...
Աչքերիս դեմ նոր երկիր է,
Նոր գարուն է, նոր այգաբաց,
Ես չեմ ուզում, որ երգերս
Լինեն թախծոտ, տամուկ ու թաց:
Ուզում եմ ես վշտերն այս բոբր
Մոռացության փոշում թաղել,
Խնդալ մեր այս նորոգ բախտով,
Հպարտանալ ու ծիծաղել:
Բայց թախծոտ են նորից հնչում
Հոգուս գուլյալ կարկաչները...
Ահավոր են և անգիջում
Կակաչները, կակաչները...

Ես լուրջ եմ, մունջ եմ, քար եմ մի չնչին,
Իմ քարե բախտից ես չեմ տրտնջում,
Ապրում եմ հավետ և իմ հավատին
Հավատարմության բառեր շնջում:
Ընկեցիկի պես քաշվել եմ մի կողմ,
Բազրիքից մայթի նայում եմ հեռուն,
Իմ աչքերի դեմ ի նշ կարկուտ ու հողմ,
Ի նշ կրունկների կրքեր են եռում:
Լավայի նման փողոցն է հոսում,

Ժիր գովքն է ասում ժամանակը չար,
Եվ կյանք ու մահի այդ հարահոսում
Լոկ մանեկենի դեմքն է ժառու վառ:
Լոկ մանեկենի դեմքն է ժառու ջինջ
Ցուցափեղկերում ցուփ խանութների,
Կավե հայացքով նայում է անվերջ,
Թե օրը իր հետ ինչեր կբերի:
Իսկ օրը իր հետ հեռու լեռներից
Ամպրոպ է բերում, ամպրոպի շառաչ,
Հառնում են գահերն ու փլվում նորից
Նրանց ծիծաղկոտ աչքերի առաջ:
Կուռքեր են ծնվում, անհամար կուռքեր,
Պղպաղակի պես վեր են բարձրանում,
Եվ ո՛վ է նրանց պարզում թևեր,
Եվ ո՛վ է նրանց հուրը ծածանում:
Լուսապսակը առած ուսերին
Սրբերի տեսքով գալիս են հանդես,
Հանձար է բաշխում աղմուկը վերին,
Երեկոն դառնում մեծարանքի ծես:
Եվ անմահների կեցվածք ընդունած՝
Ապրում են նրանք կյանքի ավիշում,
Իսկ երբ անցնում է օրը ընդունայն,
Էլ ոչ ոք նրանց երգը չի հիշում:
Դարձյալ հոսում է ժամանակը լուռ,
Նույն մանեկենի ժպիտներն են բարկ,
Պատվանդանները ժառու են թափուր,
Պանթեոնները ժառու են դատարկ:
...Ի նշ ունեն ես այս ժխտում նեխած,
Աղմուկների ու փառքի վերևում,
Իմ նեղ ու գաճաճ բազրիքի կողից
Ամեն ինչ այնպես լա՛վ է երևում:
Ես լուրջ եմ, մունջ եմ, քար եմ մի չնչին,
Իմ քարե բախտից ես չեմ տրտնջում,
Աղոթում եմ լուռ ես իմ հավատին
Եվ իմ անսահման հեռվից քրքջում:

Խոսելն արդեն ավելորդ է, արի լռենք,
Այս ճահճից վեր իմ թևերով արի թռչենք,
Իմ խարույկի բոցերի մեջ ել տաքանանք,
Գոնե մի պահ այս տաղտուկից
վեր բարձրանանք:
Լեռներն, ասես, հորիզոնը բանտարկում են,
Իմ խեղճ հոգին երազներից դատարկում են...
Ծույլ ու անբան այս մայթերին
ո՛նց դիմանալ,
Այս փակուղու վերջը ո՛րն է, ի՛նչ իմանալ:
Նորից ճառեր, նորից բառեր, ինչպես հնում,
Լուսապսակն առած այսպես ու ընդ գնում:
Ու՛ր ինքնու՛մ մեզ մեր հողից, խճից գատում,
Եթե, ի՞նչը... Էլ ումի՞ց են մեզ ազատում:
Արի մի պահ վեր բարձրանանք.
այնտեղ՝ հեռվում
Ուրիշ երգ է, և մի ուրիշ կյանք է եռում:
Գնանք՝ այս փակ հորիզոնի ծիրը բացենք,
Կեղծ խոսքերի, խոստումների
սահմանն անցնենք,

Օծվենք ցողով առավորտի, պայծառանանք,
Մա՛րդ ենք ծնվել, մա՛րդ ենք եղել,
մա՛րդ մահանանք:

ԱՍԲՈՒՆԵՐԸ ՍՏՐԿԱԼՈՒԾ

Ի՛նչ կրքեր են և ի՛նչ հուզում՝
Ազատության ցուլերի մեջ այգաբացի...
Ամբոխները ստրկալուծ՝
Առանց հացի,
Առանց վարձի,
Կարոտախտով սպառում են
Մի մեռածի հոգեդարձին:
Եվ քանի որ են աշխարհից
Դեռ ոչ մեկը ետ չի եկել,
Պարզ է՝ նրանց երազանքը
Հոգեվարքի վերջին ցնցումն է ջղաձիգ:
Եվ սգավոր թափորի պես,
Ուրվականի նման վտիտ,
Խփված, խաբված, ահագնացած՝
Շվարել են կատարվածից:
Ստրկալուծ ամբոխներից առանձնացած՝
Անչափ ճարպիկ ու աճաբարար
մի խումբ անձինք,
Դարձյալ մտոք ստրկալուծ,
Տիրանալով անդամալուծ
Օրենքների ահեղ սանձին,
Զարմանալով իրենց դիրքից,
Իրենց ձիրքից,
Իրենց խելքից,
Որպես անտեր երկրի տերեր հաղթանակած՝
Վալելում են տիրոջ արյունը սրբազան
Պալատների սրահներում արքայական,
Որտեղ անգամ երազի մեջ ոտք չի դրել
Մովորական
Մահկանացուն:
Եվ ոսկեգոծ բաժակների զրնգոցով՝
«Արհեստավարժ ըն-տըր-յալ-ներ»
իրենց կոչող

Այրերը այդ
Խմում են արդ
Հաղթարշավը՝ հազարամյակը բոլորող
Վերջին դարի
Թափը թասի տաքանալով,
Հաղթանակում այդ պայքարի
Իրենց բազկի «հույժ կարևոր» դերը նշում
Եվ հաճույքով մի անթաքույց
Ի լուր ազգի մատնանշում,
Որ գալիս են առասպելից,
